502

ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻՆ ԱՍՈՐՒՈՅ

# ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

Տպագրեալ 'ի Հայրապետութեան Տեառն
ԵՓՐԵՄԻ Արքեպիսկոպոսին Կաթու-
ղիկոսի ամենայն Հայոց։

Հրամանաւ Տեառն Ներսիսի Առաքելաշնորհ Արհի-
եպիսկոպոսի և Արիաջան Առաջնորդի ամենայն Հայոց
որ 'ի Վիրս։

Ծախիւք Բարեպաշտօն Պարոն Յովհաննիսի Անդրէասեան։

'Ի ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ։

1825 — ՌՄՀԴ

БИБЛИОТЕКА




Ինձ որ հոգւովս հաստատեցեալ՝ Երկրպագեմ քեզ Աստծին.
Եւ այլ զբաժանումն հրամանին. Ա՛ռ յիշեսցէս մի՛ այն աւուրն.
Ն. Շնորհալի.

1679

2247

Աղօթք երանելոյ Սրբոյ Հօրն ԵՓՐԵՄԻ [illegible] Ասորւոյ՝

Ասացեալ խօսք ընդ Աստուծոյ։

(Ա)

# ՏԵ՛Ս ՏԷՐ ԶՏԱՌԱ-

պանս իմ՝ և զցաւս հոգւոյ իմոյ բազմամեղիս. զո՛րս ներեա՛ և ՚ի-քեզ առաջնորդեա՛։

Որ ասացեր՝ դարձարուք առ իս, և ես դառնամ՝ առ ձեզ։

(Բ)

Ինձ լքելոյս ողորմեա՛. ինձ եղկելւոյս օգնեա՛. ինձ խաւարելոյս ճառագայթեա՛.



Ինձ

ինձ մոլորելոյս առաջնորդեա՛. որ լի՛ եմ մեղօք և անթիւ յանցանօք. և 'ի կործանս անօրէնութեան տարաբերեալ ծփիմ:

(Գ.)

Որպէս պետրոսին ձեռնարկեա՛. գոչեմ որպէս մաքսաւորն աղաղանաւ:

(Դ.)

Շնորհեա՛ որպէս զաւազակին. բա՛ց ինձ զդուռն կենաց ճանապարհին և մեծ ար-քունական առագաստին:

(Ե.)

Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան՝ կա՛լ գըմբռնելու՝ որ 'ի խորս ծովուն ան-կեալ եմ մեղօք. զերծո՛ և զօրացո՛ զիս տանել զկամս քո. ողբալ և լալ 'ի տուէ և 'ի գիշերի զամենայն անօրէնութիւն և պղերգութիւնս իմ:

(Զ.)

Աղբիւր կենդանութեան՝ արբո՛ զծարա-հոգիս իմ յառատաբուղխ վտակէ քում-մէ. որ պապակեալ տոչորիմ 'ի բոցում անօրէնութեանց իմոց. խթեա՛ 'ի քարա-



ցեալ

ցեալ սիրտ իմ . եւ հան յինէն արտասուս ապաշխարութեան։

(Է.)

Գանձդ ամենայն բարութեանց . շնորհեա ինձ դանկի միոյ չափ 'ի բազում .քո առատ բարեացդ՝ որ չարաչար եմ աղքատացեալ եւ մերկացեալ . զգեցո՛ եւ կերակրեա՛ զիս արտասուօք ապաշխարութեան ։

(Ը.)

Լոյս ճշմարիտ .քրիստոս՝ որ լուսաւորես զամենայն մարդ՝ լուսաւորեա՛ զխաւարեալս մտօք . բաց զաչս սրտի իմոյ . եւ հաստատեա՛ յերկիւղ եւ 'ի սէր պատուիրանաց .քոց ։

(Թ.)

Մի՛ դատեր . եւ մի՛ դատապարտեր զիս տէր ըստ անբաւ չարեր գործոց իմոց . եւ մի՛ կացուսցես զիս ընդ այծիսն՝ որք զայրացուցին զ.քեզ . այլ ընդ փառաւորեալսն փառաւորեա՛ . եւ ընդ պսակելոցն պսակեա՛ եւ ընդ բերկրելոյն ուրախացո՛ ։



Տաս

(Ժ·)

Շատ է ինձ տէր․ բայց յուսամ յողոր-մութիւնդ քո․ զի և շունք կերակրին ՚ի փշրանաց անկելոց սեղանոյ տն̃ իւրեանց․ շուն կոչեաց զիս տր՝ զի գայցեմ զինի քո։ Հովիւ բարի՝ խնդրեա զիս զմոլորեալս։ Նաւապետ բարի Յիսուս՝ փրկեա զիս ՚ի բազմութենէ ալեաց ծովու մեղաց իմոց․ և տուր ինձ նաւահանգիստ խաղաղութե̃։

(Ժ·Ա)

Տուր ինձ տէր սուգ․ և արտասուօք հեղե-ղացո զմարմինս իմ․ կակղացո զքարա-ցեալ սիրտս իմ․ և ժողովեա զմիտս իմ ՚ի քեզ։ Ջնջեա զբազմութիւն յանցա-նաց իմոց․ և շնորհեա ինձ զօգուտն իմ․ Ընկալ և մի՛ անտես առներ զհառաչանս սրտի իմոյ։

(Ժ·Բ)

Տուր ինձ իմաստութիւն․ և արկեա տէր զահ և զերկիւղ քո ՚ի սրտի իմում։ Լուսաւորեա զխորհուրդս իմ․ կարողացո զմարմինս իմ ժուժկալութե̃ կալ ՚ի պատ-ուիրանի քում յամ ժամ։

(ԺԳ)

Բաց տէր զաչս սրտի իմոյ · և լուսաւորեա հոգւովդ սրբով · Պարգևեա ինձ տուր խոր- հուրդս և առաքինի վարս՝ ողջոյն հանա- պազ · ահիւ և զգուշութեամբ կալ առաջի՝ յամ ժամ անդադար ։

(ԺԴ)

Ո՛վ բարերար և մարդասէր տէր՝ առանց չարչարանաց և ժամկալութեանց զերծ ազատեցայց ՚ի բազմութենէ մեղաց իմոց · զի մարմնովս տկար եմ · և հոգւով խա- ւար · ողորմեա տէր՝ և որպէս կամիս օգնեա ինձ ·

(ԺԵ)

Ամենակալ տէր՝ մի վասն բազում չարեաց իմոց մատներ ատանէր զիս · այլ դարձո ՚ի յիս՝ և դարձո զիմ ցանկութիւն իմ ՚ի քեզ · և զքեզ տուր միայն սիրել ՚ի բոլոր սրտէ իմմէ ։ ՚Ի նունայ և յանդամաձոյ կենակցոյ ամբիծ պահեա զմարմինս իմ ։

(ԺԶ)

Պատկերացն տէր՝ զանհրաժեշտ գոյութ

քո առաջի աչաց իմոց. և զաղացս զմաւմնա իմ սգալ և լալ անդադար յերկիւղէ ահեղ դատաստանաց քոց. և մի փակեր զգութ արարչական սիրոյ ՚ի ստեղծուածոյս քո՝ որ մեղօքս եմ մեռեալ.

(ԺԷ.)

Աճեցո տէր զբարիս գործել ինձ յամենայն ժամ. և խափանեա զամենայն չարիս ՚ի չար մտաց իմոց. ՚ի պիղծ և յանօրէն գնացից՝ և ՚ի չար սովորութենէ դարձուցա զիս. և հաստատեա յերկիւղ և ՚ի սէր պատուիրանաց քոց.

(ԺԸ.)

Արեգակն արդարութեան՝ փրկիչ իմ և ազատիչ Յիսուս Քրիստոս. ՚ի յոյս քո ապաւինիմ. լուսաւորեա և ջերմացո զսիրտս իմ: Խորտակեա զչար խորհուրդս իմ. և հալեա զսառնամանիս մեղաց իմոց. Շնորհեա տէր գարուն հոգւոյ իմոյ՝ ծաղկել և պտղաբերել զարդարութեան պտուղն.

(ԺԹ)

Սաստիչդ Քրիստոս ազատեա զիս 'ի դառնաշունչ օդոց մեղաց ձմերայնոց. զխաւարեալ և զսառուցեալ հոգիս իմ պայծառացո և ջերմացո. և ցօղեա զցօղն շնորհի ջերմութեան քո 'ի յանդաստանս մտաց սրտի իմում:

(Ի)

Շնչեա տէր զհարաւ քաղցրութեան շնչոյ Հոգւոյդ սրբոյ 'ի խստացեալ և 'ի թանձրացեալ սիրտս իմ. և զարթո՛ սլաստընդոստ փայլատակմամբ քո զսառնացեալ և ցամաքեալ միտս իմ:

(ԻԱ)

Բա՛ց տէր զփակեալ դուռն սրտի իմոյ. և ծագեա՛ 'ի ներքս զլուսաւորութիւն ճառագայթից քոց: Սրբեա՛ և զաղտ մեղաց իմոց. և զվէրս հոգւոյ իմոյ բժշկեա: Մտացս երկիւղիւ քո և զօրացո առնել զարդարութիւն յամենայն ժամ:

(ԻԲ)

Մղերացո՛ տէր զգլուխ իմ 'ի բղխումն

 ար

արտասուաց · լուծ զծարաւս հոգւոյ իմոյ , որպէս զայլայլման իմ : Եւ զգործոցս չար-եաց՝ փոխարկեա 'ի զղջման ջերմ սիրոյ քո՝ զգաստ մարմնով կեալ 'ի պատուիրանս քում :

(ԻԳ)

Ձգեա տէր զձեռն քո 'ի նաւաբեկելոյս՝ որ ընկղմեալս եմ 'ի խորս չարեաց · մերկեա զիս 'ի տատասկէ ծածկածուի բանութենէ մե-ղաց իմոց ալեաց : Սանձեա տէր և կապեա զխստերախ միտս իմ 'ի զբաղմանց և ու-նայնութեանց կենցաղոյս :

(ԻԴ)

Սրբեա տէր զծարաւ հոգւոյ իմոյ յաղտ , տարաւղին շնորհէ քումմէ · և մի անտես ա-նիր զաղաչանս սրտի իմոյ : Պապակիմ 'ի տաւթոյ չարեաց իմոց · զովացո՛ և լուծ զա-պականեալ և զհոտեալ զխոցս իմ ջրով ողորմութեան քո :

(ԻԵ)

Ողորմեա տէր զլուսաւորութիւն և զխա-ղաղութիւն շնորհեա քոյ 'ի սրտի իմում : Եւ զցանկութիւն կիզեր մեղաց 'ի մտաց իմոց



հա

հալածեա . և մարմնոյ իմոյ շնորհեա զսրբ-
ութեան վայր՝ առաքինութեամբ կեալ 'ի-
հաճոյս կամաց քոց .

Եւ հան զխուշ մեղաց 'ի սրտէ իմմէ . զի
հոգի իմ չարաչար վիրաւորի . և սերմանեա
սերմն բարի 'ի սրտի իմում աճեցուցանել
և պտղաբերել զարդարութեան պտուղս .

(ԻԶ)

Հալածեա տէր զխաւար 'ի հոգւոյ իմոյ .
և զգեցո 'ի լոյս արդարութեան ճառա-
գայթից քոց . Զարդարեա երկինքն , զղջ-
մամբ և արտասուօք զոգի իմ . երկնչել 'ի
դատաստանաց քոց և պահել զամենայն
պատուիրանս քո :

(ԻԷ)

Զարթո զիս տէր յահագին խորութե-
նէ քնոյ մեղաց . և զարթուցեալ մարմին
իմ զգաստացի յամ՞ գործս բարիս . խորհել
միշտ մեծաւ երկիւղիւ , և առնել զհաճոյս
քո յամենայն ժամ :

(ԻԸ)

Ազատեա զիս տէր 'ի ծառայութենէ զը-

մեղաց. եւ խառնեա՛ ՚ի թիւս ծառայից քոց՝ որք սիրեցին զքեզ եւ զպատուիրանս քո պահեցին. տո՛ւր զերկիւղ նոցա ՚ի սիրտ իմում. եւ ուսո՛ զիս գնալ ՚ի շաւիղս գնացից նոցա։

(ԻԹ)

Թշուառացո՛ զկարիս մարմնոյ իմոյ՝ եւ յաճախեա՛ յիս զշնորհս Հոգւոյդ սրբոյ՝ լինել տաճար եւ բնակարան ա̃ծային կամաց քոց։ Այսու սիրով սիրել զքեզ եւ տալ զա̃մ ցանկութիւնս եւ զսէր աշխարհիս այսորիկ. որով եղէ կորուստ եւ անցումն հոգւոյս։

(Լ)

Ողորմեա՛ տէր յանմարդաբնակ անապատիս. եւ ՚ի ձեռն սորին արժանաւորեա՛ զիս խառնել ընդ առաքինին սուրբ հարանցն որք եւ զգաստ ժուժկալութեամբ ժառանգել զխոստացեալ պարգեւսն։

(ԼԱ)

Առաջնորդեա՛ ինձ տէր ՚ի նեղ եւ ՚ի նուրբ ճանապարհն. որպէս առաջնորդեցեր ս̃րց քոց. եւ զօրացո՛ զտկարութիւն իմ ժուժ-

կալութեամբ և համբերութեամբ գնալ ՚ի ճանապարհն քո ջերմեռանդ սրտիւ ։

(ԼԲ)

Նայեաց տէր ՚ի նեխեալն և ՚ի թարախեալ հոգւոյս իմ և լուա՛ ծնայլն ջրով . հոգևոր աղիւ համեմեա . և անուշահոտ իւղովդ սրբով օծեա և զկատարեալ առողջութիւն ընձեռեա

(ԼԳ)

Սնուցեալ տէր զքուն աչաց իմոց և թափեա զնիրհումն ՚ի գլխոյ իմոյ . զի ծանրացեալ դանդաղանօք՝ պաշարէ զմարմինս իմ։ Սրբեա զիս տէր արթուն և պատրաստ յամենայն ժամ . զի զգաստութեամբ և արդարութեամբ վարեցից զկեանս իմ ։

(ԼԴ)

Տես տէր զլքումն ողորմելի իմոյ որ զօրացեալ է ՚ի վերայ իմ . հանապազ ցանկայ կերակրոյ և ըմպելւոյ՝ և համեղութեան խորտկաց . այլ դու տէր յանձի կալով՝ կարեա զցանկութիւն մարմնոյս անեհչանաց ։

(ԼԵ)

Եւ քանզի միտք իմ ցնդեալ պղտորեալ



բան

բանդագուշանաւ ջըջէ 'ի հատանս երկրաւոր կենցաղոյս ։ այլ դու տէր լուսաւորեա զմիտս հոգւոյս առանց զբաղմանց և երկիւղածութեանց՝ արի և զգաստ ամենայորդոր փութով գալ դէմ աստուածային սիրոյ քո ։

(Խ)

Հալածեա տէր զմոլ չար մտածմունս երկրաքարշս 'ի խորհրդոց մտաց իմոց ։ արմատ բարեաց անկեալ հաստատուն 'ի սրտի իմում ։ և սպառել շնորհաց 'ի հոգիս իմ նկարեա ։

(ԽԱ)

Աղաչեմ բարերար և ողորմած տէր՝ արթութիւն և զուարթութիւն պատրաստեա զիս ։ ուսո ինձ գնալ 'ի ճանապարհս քո բարի ։ զի արժանի եղէց մեծի փառաց քոց ։

(ԽԲ)

Եւ քանզի ցանկութիւն ճաշակման՝ անձին զաղեցուցանէ զմիտս իմ ։ արդ՝ հալածեա զորկրասիրութիւն յինէն յորմէ խաբեցայ միշտ ։ և կերակրեա զիս երկիւղիւդ քով սրբով ։



Ե.

(ԼԹ)

Աղաչեմ Տէր զմի ՚ի սերովբէից քոց՝ բե-
րելով կայծակն հրոյ՝ մերձեցուցանել ՚ի-
շրթունս իմ. և հանցէ ՚ի բաց զանօրէնութիւնս
իմ. և զմեղս սրբեսցէ. և զխորհուրդս իմ
մաքրեսցէ. և զպարտութիւնս իմ ջնջեսցէ և
լուսաւորեսցէ զմիտս իմ. ժառանգել
նովաւ զկեանսն յաւիտենից.

(Խ)

Աղաչեմ տէր զբաժակ ուրախարար հոգ-
ւոյդ սրբոյ ՚ի յեղջելս՝ որ ծարաւիմս առ
քեզ. արբի՛ և զուարթացայց զեռանդն սիրոյ
քո. լցի՛ց և ՚ի բա՛ց ջնջեա զմիտս դառնութեան
յանցանաց իմոց.

(ԽԱ)

Աղաչեմ տէր զլոյս քո. և լուսաւորեա
զմիտս իմ. և զխորհուրդս իմ լուսով
գիտութեան քո. զխաւար մտաց իմոց հա-
լածեա՛ և զանկարութիւն անձին իմոյ կազ-
դուրեա՛ ՚ի ջանս և ՚ի վաստակս հոգւոյ
իմոյ:

 Աղա

(ԽԲ)

Առաքեա տէր զհրեշտակ խաղաղութեան քո վերակացու և պահապան անձին իմոյ՝ որպէս իշխանութիւն՝ գնալ 'ի վերայ իժի և քարբի · և կոխել զամենայն զօրութիւնս թշնամւոյն · և զիս պահեա տէր որպէս բիբ ական ընդ հովանեաւ թևոց քոց ։

(ԽԳ)

Յորժամ երթայցեմ 'ի ճանապարհի , մի թողուր զիս միայն · այլ առաքեա զօգնականութիւն քո զկնի իմ , պահելով զիս յամենայն փորձութեանց սատանայի 'ի տուէ և 'ի գիշերի ։ Եւ չտալ թոյլ մեղանչել յողդողդ և թոյլ մտաց իմոյ · այլ կոծել զկոծ 'ի վերայ մեղաց և անօրէնութեան իմոյ ։

(ԽԴ)

Պահեա զիս տէր 'ի բանից և 'ի գործոց · 'ի տեսութեանց և 'ի դեգերիչ խորհրդոց · և զերկիւղ դատաստանի քո տպաւորեա 'ի սրտի իմում , անդրաւ յօժարութեան մըտօք լութալ և պահել զպատուիրանս քո ։

 Փա

A / 990

(ԽԵ)

Փակեա՛ Տէր զդուռն մեղաց իմոց. և բա՛ց ինձ զդուռն լուսոյ և արդարութե. զի երկնաւորաց սիրով եկից զհետ իմոյ տառապելոյ: Որ ասացեր՝ եկայք առ իս ամ աշխատեալք: Դու դարձեալ թէ՝ որ խնդրէ, առնու. որ հայցէ, գտանէ. և որ բախէ՝ բացցի նմա:

(ԽԶ)

Նայեա՛ց Տէր ՚ի մերկութիւն անձին իմոյ՝ զոր կողոպտեաց թշնամին. և այժմ խայտառակ և ամօթալից կամ առաջի քո: Մարդասիրեա՛ և զգեցո՛ ինձ հանդերձ. մո՛յծ և ուրախացո՛ ՚ի կոչումն բաղմերոյ քոյ:

(ԽԷ)

Զգեցո՛ ինձ Տէր զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք իմովք. ցո՛յց զանոխակալութիւնդ քո յիս և լուսափայլ ողորմութեամբ քո զարդարեա՛ զմերկութիւնս իմ:

(ԽԸ)

Լո՛ւր Տէր աղաղակի անառակիս՝ որ ա-



ԳԱՏԱՐԱՆ ... ԲИБЛИОТЕКА ...
ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
3006 1879

մօթով կամ առաջի քո · զգանձ հայրենի
վատնեալ՝ սովամահ կորնչիմ · կերակրել
հաւատար եղէ խոզից անասնոց և նմանե-
ցայ նոցա։

(ԽԹ)

Մ՛ի մերժեր զիս տէր ՚ի հայրենի գթոյ
քո · համարձակիմ ՚ի խնամ սիրոյ քո · ՚ի-
ծնողէդ վերջացայ՝ և զորդիութիւն իմ
ուրացայ։ Հա՛յր՝ մեղայ յերկինս և առա-
ջի քո · չեմ արժանի կոչել որդի քո · արա՛
զիս իբրև զմի ՚ի վարձկանաց քոց։

(Ծ)

Զարդարեա՛ զիս տէր մեծաւ երկիւղիւ
քո · և դարձո՛ յանառակութենէ ՚ի յար-
դարութիւն · յաղտեղութենէ ՚ի սրբու-
թիւն · ՚ի ծուլութենէ ՚ի զգաստութիւն ·
ժուժկալութեամբ գնալ ՚ի ճանապարհս
քո ուղիղս։

(ԾԱ)

Պատուարեցո՛ զիս տէր ՚ի չարաչար խորհր-
դոց իմոց · և յառնելոյ զկամս մտաց իմոց
և մարմնոյ իմոյ · պահեա զահագին օր գալստեան



քո

քո տէր նկարեալ առաջի աչաց իմոց . դո_
ղալ և սարսիլ ՚ի դատաստանաց քոց ։

(ՃԲ)

Պայծառացո՛ տէր զլապտեր հոգւոյ իմոյ որպէս կուսանացն իմաստնոց . և շնորհեա պատրաստել արթնութեամբ՝ ընդ առաջ ելանել երկնաւոր փեսային . զի մի մնա_ ցուք արտաքս որպէս յիմար կուսանքն ։

(ՃԳ)

Ցուցանո՛ տէր ինձ զճանապարհս քո և ուսո ինձ զարդարութիւնս քո . Հեռացո՛ տէր զմարմինս իմ ՚ի խորհրդոց չարաց՝ և հաս_ տատեա յերկիւղ բարեաց . սուրբ և անա_ րատ կեալ առաջի քո յամենայն ժամ ։

(ՃԴ)

Զամենօրհնութիւնս իմ ընծայեմ տէր . ՚ի յոյս բարեաց և յերկիւղ քո զմիտս իմ բևե_ ռեալ ˙ լցեալ սիրով պատել և անձն ունել մեծի գալստեան քո ։

(ՃԵ)

Զօրացո՛ զիս տէր ՚ի պատուիրանաց քոց՝ մնալ երկիւղիւ . դողալ և սարսիլ

 ՚ի

՚ի դատաստանաց քոց · խնդրել զարդարու-
թիւն և զիրաւունս երեսաց քոց · առնուլ
զպարգևս շնորհաց քոց ։

(ԺԱ)

Արձակեա զիս Տէր ՚ի կապանաց մեղաց իմոց · և զհնացեալս մեղօք՝ վերստին նորոգեա · և զխաւարեալս ՚ի ցանկութենէ մարմնոյս լուսաւորեա գնալով ՚ի ճանապարհս խաղաղութեան · զի տեսցեն աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր սրբոց քոց ։

(ԺԲ)

Բժշկեա Տէր զանբժշկելի հիւանդութիւնս իմ · որ կարկամեալ դնիմ ՚ի մահիճս մեղաց իմոց, և դեգերեալ կամ ՚ի դուռն երկրորդ Սելովմայ · սպասել և այն ունիլ մեծի զալստեան քո ։

(ԺԳ)

Հրամայեա Տէր ինձ որպէս զանդամալուծին առողջանալ · խորտակել զանկողինս ցաւոց իմոց · շրջել ընդ կամարարս քո · ՚ի տան տեառն և ՚ի դաւիթս ա̃յ

Ծաղկիլ և ոչ մեղանչել ։ Խորտակեա՛ տէր զբռնութիւն սատանայի ․ հա՛ն և 'ի բաց ընկեա՛ զզօրութիւն նորա ․ արգե՛լ զյարձակումն նորա 'ի վերայ իմ ․ զի տարապարհակ վարեալ զմարմինս իմ, տանի ընդարձակութիւն Ճանապարհէ՝ որ տանի 'ի կորուստ և յապականութիւն ։

(ԾԹ)

Յիշեցո՛ տէր զբաղեալ և մոռացեա՛լ մտաց իմոց զահաւոր և զսոսկալի դատաստանքո ․ զպատիւ և զփառսն արդարոցն ․ և զաններելի տանջանսն մեղաւորացն ․ և նոքօք զարհուրեալ դողացո՛ զմարմինս իմ՝ տեսանել զմահ հանապազ առաջի աչաց իմոց ։

(Կ)

Բևեռեա՛ տէր զմարմինս իմ ընդ երկիւղ քո ․ և ընդ սէր պատուիրանաց քոց ․ և զհրամայեալսն 'ի նմա՝ երկիւղիւ լսել ․ առանց ծանծրութեան կատարել միշտ՝ և մերկանալ 'ի մեղաց և 'ի ցանկութեանց կենցաղոյս ․ և պայծառանալ փառօք առաքինութեան ։



Փըր

(ԿԱ)

Փրկեա զիս տէր 'ի գաղտնաձիգ նետից սատանայի. որ բազում մեքենայիւք պատեալ պաշարէ զիս։ Աւար առեալ զմիտս իմ. վարէ 'ի գերութիւն ցանկութեան մեղաց. առնելով ծառայ և այսպն կատականաց թշնամեաց։

(ԿԲ)

Սրբեա զիս տէր յերկիւղ քո. և զօրեա զօրութեամբ քո. զհիւանդութիւն հոգւոյ իմոյ առողջացո. և զցաւս մարմնոյս բժշկեա և զջերմունե̄ սրտի քո հաստատեա 'ի սրտի իմում, չարչարակից լինել սրբոց քոց։

(ԿԳ)

Պահեա զգերեալս 'ի սատանայէ. և զմեղօք վաճառեալս եգիպտական և խիստ տանջանացն՝ փրկեա 'ի բռնակալ չար բռնաւորաց դիւացն. և յեղէգնակոխ մեղացն հանցես՝ և արկցես զիս յերկիրն աւետեաց։

(ԿԴ)

Ընկղմեա տէր զթշնամին իմ ընդ զօրութ̄ի



վա

փարաւօնի • զի սպառնացեալ 'ի վերայ իմ խրոխտոյ • դարձուցանելով զիս յառաջին յանցանացն ընդ իշխանութեամբ իւրով ծառա- յել մեղաց և անօրէնութեանց:

(ԿԵ)

Զերծո՛ զիս տէր 'ի լերինս քարանձաւի• կամ 'ի տեղի անապատի • ուր և ողորմու- թիւն քո առաջնորդեսցէ ինձ , հանդիպել մեծի փառաց անուան քո • տալ ինձ ըզ- թեւս աղաւնակերպ հոգւոյդ սրբոյ՝ թռու- չել և վերանալ խառնել յերամս արդա- րոցն:

(ԿԶ)

Ժառանգեցո՛ զիս տէր յօթեւանս արդարոց քոց • և զհանգիստ աշխատութեան սուրբ հարցն պարգեւեա՛ ինձ• անտես արա զյան- ցանս իմ և դասաւորեալ պայծառացո՛ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան քո:

(ԿԷ)

Հաստատեա՛ տէր զխաղաղութիւն և ըզ- պայծառութիւն լուսոյ կենաց անձին ի- մոյ • զի մի խոտորեցից յաջ կամ յահեակ•

 և

և դատապարտիմ յաւուր գալստեան քո՝ պահանջելով զյետին նաքարակիտն մինչ խայտառ։

(ԿԸ)

Մի՛ մերժեր զիս 'ի բազմագութ ողորմութեանց քոց • զապաւինեալս 'ի քեզ ամրացո՛ աներկիւղ պահելով յամենայն որոգայթից սատանայի • զի մի՛ գերի վարեալ տանիցէ զմիտս իմ 'ի զբաղումն և 'ի չար ծառայութիւն։

(ԿԹ)

Տո՛ւր զիս տէր առնե՛լ զարդարութիւն • խօսել զճշմարտութիւն • սիրել զբարութիւն, և ատել զապականութիւն • խոտորիլ 'ի չարեաց, և գնալ 'ի ճանապարհս բարեաց։

(Հ)

Ապրեցո՛ զիս տէր յոլորտաց՝ որք զան 'ի վերայ իմ, ըմբռնել զիս 'ի մեղս և 'ի ծուլութիւն անժուժկալութեան • մոռացումն առնել յանցանաց իմոց • և ոչ տալ յիշել զօր հատուցման • և զարհուրելի պատասխանն որ ասէ • երթա՛յք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենից։



Կա՛ն

(ՀԸ)

Կանգնեա՛ զիս տէր ՚ի գլորմանէ. եւ ՚ի բազմամեղ անդնդային խորութենէ մեղաց՝ եւ բարձրացո՛ թեւօք Հոգւոյդ սբ ՚ի խնդրուածս հաճոյից. ՚ի նորոգումն եւ ՚ի լուսաւորութիւն մտաց. ՚ի ջնջումն մեղաց. եւ ՚ի կատարումն սուրբ պատուիրանաց քոց։

(ՀԹ)

Խնդրեմ տէր զեղծեալ եւ զկորուսեալ քո պատկերս՝ որ ՚ի մէջ աղբի եւ տղմի մեղաց փակեալ կայ. զնա ածեալ աւելաւ շնորհի քո եւ դիր ՚ի գանձանակին առաջին յորմէ անկաւ։

(ՀԺ)

Ե՛կ տէր ՚ի տեսութիւն հիւանդացեալ հոգւոյ իմոյ. դիր զձեռն քո ՚ի վերայ իմ. բժշկեա՛ ասելով. զօրացիր առ զմահիճս քո, եւ երթ ՚ի տուն քո արդարութեամբ։

(ՀԻ)

Ե՛կ տէր ՚ի խնդիր մոլորելոյս՝ որ յածեալ շրջիմ արտաքոյ հօտի պատուիրանաց քոց. գազանաբեկ եղեալ եւ քարավէժ մե-

զօր կառափնատին ՚ի դիւաց. ընդունեա և անձն ՚ի փառաւոր հայրենիսն և խառնեա ՚ի գա-ռինս հօտի քո։

(ԻԵ)

Իետեւեա՛մ որ ըղձեա ձողոպրելոյս ՚ի քէն. արագապէս փութացիր. հա՛ս և ընդունեա զապաստանեալս ՚ի ձայնէ կոչման քո. և դի՛ր ՚ի բանդ կապանաց անխզելի սիրոյ քո։

(ԻԶ)

Մի՛ թողուր զիս տէր հեռանալ ՚ի սիրոյ պատուիրանաց քոց՝ և ՚ի մարդոց առաքի-նութեանց. այլ յորդորեա՛ առաւելուլ յամենայն գործս արդարութեան. առանց մեղաց և առանց իրիք խափանանաց պահ-ել զքեզ սրբութեամբ և արդարութեամբ առաջի քո զամենայն աւուրս կենաց իմոց։

(ԻԷ)

Մի՛ մատներ զիս տէր ՚ի ցանկութիւն մե-ղաց. ՚ի քուն աչաց և ՚ի ցանկութիւն մարմնոյ. այլ պարգևեա՛ երկիւղիւ. և ապրեցո՛ յամենահնար չար դիւացն և յաշխարհա-կան զբօսանաց։

(ՂԸ)

Մի՛ յապաղեր տալ ինձ զփրկութիւն հոգ-ւոյ և զջերմութիւն սիրոյ․ զկերակերպ պարկեշտութի՛ և զմաքրեայ ժուժկալութի՛․ զարտասուաց ըղձումն․ զանդադար աղօթս․ զհնազանդութի՛ և զհամբերութիւն յուսոյ։

(ՂԹ)

Յաղթեա՛ տէր հակառակամարտին իմոյ․ և զօրացո՛ զիս ընդդիմակաց լինել պատե-րազմողին ՚ի վերայ իմ․ և զգեցո՛ ինձ ըզ-զրահն հաւատոյ․ պահօք և աղօթիւք սըր-բել զաղտս ցանկութեան և զխորհուրդս մարմնականս․ և առնուլ զշնորհս փրկականս։

(Ճ)

Տո՛ւր ինձ տէր տեղի ապաշխարութեան․ աշխատութեան հանդիստ․ խաղաղութի՛ հոգւոյ․ և արդարութեան ճանապարհ․ ամ-քութեան զէն․ հաստատութեան յոյս․ և պնդութեան երկիւղ։

(ՃԱ)

Անցո՛ զիս տէր ընդ անհուն անցից մեղաց՝

 խոր

խորաթուլից ծովահեղձ ցանկական կեն-ցաղիս • և շնորհեա ինձ 'ի լոյս աչացս՝ և 'ի մտացս տեսութիւն • 'ի հանգիստ կե-նաց • 'ի հանդիպումն շնորհաց • 'ի շաւիղս ճանապարհացն արդարութեան ։

(ԻԲ)

Շնորհեա ինձ տէր ջուր աչացս • առատա-ուաց հոսումն • մեղաց սուգ • մաքրոյ սրտի երկիւղ • ոսկերաց իմոց սարսափումն և դողումն լալեան ամնջանաց • կենաց ճանա-պարհ • և անդադար պաղատանս ։

(ԻԳ)

Ամրացո զիս տէր 'ի պատուիրանաց պահ-պանութի • որով յայտնի ժուժկալութիւն 'ի մարտ պատերազմի • քանսարկուին յաղ-թութիւն • 'ի մարմնի մեռանիլ • և պայծա-ռանալ 'ի հանդերձին ։

(ԻԴ)

Լցո զիս տէր երկիւղիւ և զղջմամբ • ար-տասուօք և հառաչանօք • սիրով և սրբու-թեամբ • շնորհօք և ճշմարտութեամբ • գիտութեամբ և ամենայն առաքինութեամբ ։

(ՁԵ)

Գոչեմ տէր զզղջութիւն մեղաց իմոց. և թափեմ զհուր դառնութեան յանցանաց . և պարարեմ զխոր իմ արբմամբ սուրբ Հոգւոյդ . և զփշաբեր մորմնս իմ լցո՛ շնորհօք . զարդարեա՛ և 'ի պտղաբերութիւն փոխարկեա՛ ։

(ՁԶ)

Երևեցո՛ տէր զշնորհս քո՛ զգութ և զողորմութիւն քո 'ի պաշտօնեայս քո . և տաճարացո՛ զիս՝ բնակարան լինել ամենասուրբ Հոգւոյդ . մի՛ ես ծառայել մեղաց և ապականութեանց ։

(ՁԷ)

Բժշկեա՛ զիս տէր 'ի հպարտութենէ և յամբարտաւանութենէ . 'ի սնափառութէ . 'ի մարդահաճութենէ և յոխակալութէ . 'ի նախանձու և 'ի յատելութենէ և յամենայն չարութենէ ։

(ՁԸ)

Փրկեա՛ զիս տէր 'ի մարդկային գովեստից 'ի փառաց և 'ի մեծարանաց . լոյս կարծե-

լով զխաւարս՝ համբաւեն 'ի մերայ խմբա-
րն՝ զեղկելիս և զողորմելիս։ Համբաւեն զիս
առաքինի. և ես եմ արատաւորելի և ան-
Թիւ մեղօք լի։ Ծածկեա՛ զիս 'ի լուսոյ սուտ
գովութեանց և երանութեանց. զի ոչ գի-
տեն զմեղս իմ։ Ընդ իմ սրբութեամբ՝ և
լի եմ աղտեղութեամբ. կերպարանիմ ա-
ռաքինութեամբ՝ և կեամ անառակութբ.
փայլիմ երկիւղածութբ և մեռնիմ մարդա-
հաճութեամբ. ճանաչեմ զճշմարտութի
և խօսիմ զստութիւն. գիտեմ զարդարու-
Թիւն՝ և գործեմ զանօրէնութիւն։

(ՁԹ.)

Բուժեա՛ զիս տէր 'ի մեղաց և 'ի բամբա-
սանաց. և թող ինձ զանժուժկալութեանն
և զծուլութեանն. զորկորստութեանն և
զդատարկաբանութե. զցանկութիւն աղտե-
ղութեան. զհայհոյութիւն և զամենայն
բիծս չարեաց։

(Ղ)

Արա՛ զիս տէր հաստատուն անշարժ 'ի տեղի
փորձանաց պատերազմի. առանց երկիւղի



քաջ

քաջ և աննկուն հաւատով և յորդորական սիրով՝ զօրացեալ լինել ընդ ելելոց դիւացն ՚ի վերայ իմ․ զինեա՛ զիս ամրակուռ զինու քո՝ տալ պատերազմ և յաղթել թշնամւոյն հակառակամարտի․ որ կամի խաբել զիս որսալ։

(ՂԱ)

Զընկղմեալս տէր ՚ի խորս մեղաց հանցես և բերցես ՚ի լոյս պատուիրանաց քոց․ և առ քեզ կոչեսցես զհեռացեալս ՚ի քէն․ և թողցես զգործս իմ անառակութեան․ զապականեալս ՚ի քեզ մխիթարեսցես․ զարձակեալս ՚ի կապոյ պատուիրանաց քոց՝ ըմբռնեա՛ ընդ լուծ սիրոյ քո։

(ՂԲ)

Զգութ սիրոյ քո տէր միաւորեա՛ յիս․ և զարգելեալս ՚ի կապանաց բանսարկուէ՝ արձակեա՛․ և խզեա՛ զկապանս մեղաց իմոց․ առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհ․ և տեղի յարկից պատրաստեա՛․ և պսակեա՛ ընդ սուրբս քո։

(ՂԳ)

Հաղորդս արա՛ զիս տէր աստուածային սի-

բոյ քո • սիրել զպատուիրանս քո և գնալ 'ի
ճանապարհս քո • չարչարիլ մինչև ցմահ վն
անուանդ քո • մտանել 'ի փառս և գալ
ընդ սուրբս քո • և ուրախանալ միշտ ընդ
կամարարս քո ։

(ԻԳ)

Գթա՛ 'ի մեղուցեալ և յեղկելի անձն իմ
տէր • խափանեա՛ զանսաստ ցանկութիւնս
իմ • սրբեա՛ զաղտեղութիւն մեղաց • և
քակեա՛ զանօրէնութիւնս իմ • բժշկեա՛
զվիրաւորեալ հոգիս • և առողջացո՛ զհի-
ւանդացեալ մարմինս իմ • ցրուեա՛ զչարն
յինէն • և ժողովեա՛ զբարիս և լից զպա-
կասութիւնս իմ ։

(ԻԴ)

Առաջի քո անկանիմ և խնդրեմ զթողու-
թիւն մեղաց իմոց • զպաղատանս իմ ընկալ •
և քաւիչ լեր յանցանաց իմոց • պայծառացո՛
և լուսաւորեա՛ զխորհուրդս և զմիտս իմ •
կարողացո՛ զմարմինս իմ անդադար կալ 'ի-
փառաբանութիւն անուանդ քում սրբոյ ։

(ԻԵ)

Օ անկեալս մեղօք կանգնեա՛ այր և զխո-

ցեալս 'ի Թշնամեացն դեղատուեալ . բայց զցաւս մեղաց և մեռեալ զկենդանի յանդանայց . յաղթահարեալ 'ի դառն մահճաց . և ազատեա յանողորմ տանջանաց 'ի մարմնական յղփանայ հեշտայն և 'ի դառն ճգնաւորացն դատեցն :

(ԳԷ:)

Լեր մխիթարացու և պաշտպան անձին իմոյ ով տէր իմ Յիսուս . պահեա զիս 'ի դիւաց . և փրկեա զիս 'ի մարդկային փորձանաց : Հովանաւորեա յաղթեա և կացո զիս 'ի մէջ պատերազմողաց քոց և ընտիր լինել . գործակցեալ ինձ լինել քաւարան մեղաց՝ և համբերել վշտաց . տառապանացն գործովք հանդիպել քում աստուածային շնորհացդ .

(ԳԸ)

Վայ ինձ տէր՝ վայ ինձ . զի մեղօք կործանեցայ . և մտօք խաւարք աղտեղեցայ . 'ի բարեաց ունայնացայ՝ և 'ի սիրոյ ցամաքեցայ . 'ի լուսոյ խաւարեցայ՝ և 'ի գնայոյ դադարեցայ : Ոչ ունիմ այսր լուսոյ և արտասուաց . ծփիմ տարակուսեալ . զի յոյս և ակն բարեաց ոչ ունիմ :

## (ԻԹ)

Կանգնեա տէր զաւարառեալ անձն իմ որ լի եմ մեղօք և անթիւ յանցանօք. և խարշեալ և տոչորեալ եմ ամենայն անդամօքս. յորոց մինչև ցգլուխս ապականեալ. և չիք հնար բժշկութեան. եթէ ոչ՚ի քէն տէր իմ Յիսուս. խնդրեմ առ վիրաւորեալս գեղատուութեամբ. և մի գարշիր՚ի չարահոտ ախտացելոյս:

## (Լ)

Հեռացո տէր զբերան իմ՚ի բամբասելոյ. և զլեզու իմ՚ի չար խօսելոյ. զականջս իմ՚ի չարըլուր լսելոյ և զձեռս իմ՚ի յափշտակելոյ. և զոտս իմ՚ի յանառակ գնացս երթալոյ. և զամենայն անդամս իմ զգաստացո միշտ զհաճոյս քո կատարել:

## (ԼԱ)

Մեղայ քեզ տէր մեղայ. զի յանցեայ զպատուիրանաւ քով. ՚ի լուսոյ կենաց ելայ՝ և մտայ՚ի խաւար մեղաց ցանկանալով անեղութեանց: ՚Ի սիրոյ քո հեռացայ՝ ըմբռնեցայ՚ի չարէն. և եղէ որդի կորըս-



տեան

տեան. ողորմեա՛ ինձ բազմամեղիս բարե-
րար՝ զի դու միայն ես մարդասէր։

(ԻԲ)

Ի քեզ Տէր ապաւինիմ. որ քաւարան ես մեղաւորաց. և փախուցելոց դարան. արա փախստական զթշնամին իմ։ Օգնական զա՛յլ ոք ոչ ունիմ. բայց զքեզ միայն ունիմ պահապան անձին իմոյ՝ ՚ի վտանգից փրկեա. ՚ի յորոգայթից ապրեցո՛. և արժանի արա զիս լինիլ որդի յաւիտենին։

(ԻԳ)

Ողորմեա ինձ տէր կենաց և քաւիչ մեղաց. կատարիչ խնդրուածոց և արձակիչ կապե-լոց. բաշխող պարգևաց և տուիչ ամենայն շնորհաց։

(ԻԴ)

Լո՛ւր տէր զաղաչանս իմ. և ընկալ զպա-ղատանս իմ. քաւեա զյանցանս իմ. և կատարեա զխնդրուածս իմ. արձակեա ըզ-կապանս իմ, և բժշկեա զհոգի իմ. առող-ջացո՛ զմարմինս իմ և ուղղեա զգնացս իմ. փութացո՛ զիս ժամանել յօթևանս սրբոց։



Տ՟ր

(ԼԵ)

Հալածեա՛ Տէր զբազում ախտաժետու-
թիւնս իմ. զցաւս ՚ի մարմնոյս՝ և զաղտ ՚ի-
հոգւոյս. զքուն ՚ի գլխոյս՝ և զյագումն որ-
կորոյ: Պահեա՛ զխորհուրդս իմ անզբաղ.
զսիրտս իմ սուրբ. և զմիտս իմ լուսաւոր.
զցանկութիւն՝ առ քեզ. և զյօժարու-
թիւն՝ յաղօթս ՚ի տուէ և ՚ի գիշերի:

(ԼԶ)

Բղխեա՛ Տէր ՚ի գլուխ իմ աղբիւր վտա-
կաց. և զանդս մտաց իմոց ողողեա՛. զաղտ
յանցանաց իմոց լուա՛. և սրբեա՛ զթարախ
վիրաց իմոց. զխուշ մեղաց իմոց խլեա՛ և
տնկեա՛ զբոյս կենաց: Աճեցո՛ Տէր զարդա-
րութիւն՝ և նուաստացո՛ զանօրէնութիւն.
մեռո՛ զմարմնոյ ցանկութիւն՝ և նորոգեա՛
զհոգւոյս կենդանութիւն:

(ԼԷ)

Կոչեա՛ Տէր զմեղուցեալ անձն իմ ՚ի քեզ.
զի մերձենալ առ քեզ ոչ իշխեմ. պատ-
կառիմ յամօթոյ՝ և զարհուրիմ ՚ի գործոց
իմոց. ոչ ունիմ առ քեզ համարձակու-

 թիւն

Թիւն՝ զի ես ինձէն եմ կորուսեալ։ 'Ի սուրբ պատուիրանաց քոց հեռացայ՝ և մերկացայ 'ի փառաց քոց. այլ դու տէր գթա՛ յիս և ողորմեա՛. զի ստեղծուած եմ անարատ ձեռաց քոց։

(ԻԳ)

Ոչ իշխեմ տէր անյոյս լինել. զի ողորմած ես գթած. և փառս անճառ խոստացար դարձելոց մեղաւորաց. այլ ես զարհուրիմ և դողամ. և երկնչիմ 'ի բազում և յանթիւ մեղաց իմոց. զի պատրեալ խաբեցայ յորոգայթն. և արդ զինչ լինիմ եղկելիս՝ որ տարակուսեալ եմ 'ի կենաց։

(ԻԴ)

Արա՛ զիս տէր 'ի սուգ և յարտասուս վասն մեղաց իմոց. զի ծանրացեալ եմ անօրէնութեան բեռամբ՝ և յոգնեալ աղաւեզի խորհրդով. շնորհեսցես ինձ զի ոչ խռովեսցես զիս 'ի մարմնի. արդ տարեալ դողամ, Թէ ոչ մեռան ինձ այսպիսի չարիք։

Աղաչեմ բարերար տէր՝ մի կոչեր զիս յատենի. և տանջանաց մի մատներ զիս. այլ



փրկ

փրկեա՛ 'ի հրոյ գեհենին. և 'ի վտանգիցն ապրեցո՛. և ողորմեա՛ ինձ. զի դու միայն ես մարդասէր:

(ՃԺ)

Ա՛յ ինձ տէր՝ զի ծփանք տարակուսանաց պատեն զիս. և զսիրտ իմ խռովեն. զոր աղօթեմ ոչ գիտեմ: Ամաչեմ և ոչ իմանամ. շրթունք իմ բարբառին՝ և միտք իմ ձողոպրեալ յածին այսր և անդր և զկայումն ոչ ունին: Եւ կամիմ զի լիցի անդ՝ բայց ոչ դադարին. ոչ տեսանին արդեօք և ոչ ըմբռնին. զոր աշխատիմ և ոչ ինչ օգտիմ. որպէս ձայն հնչեալ պղնձի և ծնծղայի՝ թափուր և ունայն դատիմ. և անպտուղ գտանիմ յամենայն բարեաց:

(ՃԺԱ)

Ընկա՛լ տէր զմոլորեալս որ փախուցեալ կամ 'ի լերինս. որպէս ծառայ չար 'ի տեառնէ հալածեալ վասն մեղաց: Եւ 'ի սուրբ եղբարց հրաժարեալ եմ. 'ի սուրբ պաշտամանց հեռացեալ. զի սիրող էի մեղաց՝ և նախատինք կրօնաւորաց. անյագ

՚ի մեղաց և ՚ի զրկանաց։ Անդութ էի աղ-
քատաց՝ և հակառակ սպասաւորաց. ան-
ողորմ էի հիւանդաց՝ և անմխիթար աշխա-
տողաց. չէի իսկ արժանի կալ ՚ի մէջ ճգ-
նաւորաց։

(ՃԺԲ)

Հանգո՛ տէր զշնորհս Հոգւոյդ սրբոյ ՚ի վերայ իմ. որ միայն եմ ՚ի պատերազմի առանց օգնականի։ Սրբեա՛ տէր զտաճար հոգւոյ իմոյ՝ և առ իս լեր ընդ երեկոյս։ Բա՛ց զաչս հոգւոյ իմոյ՝ և լուսաւորեա՛ ըզմիտս և զխորհուրդս իմ։ Տուր ինձ զօրութիւն տէր իմ Յիսուս և ընկալ զօրհնաբանութիւն բերանոյ իմոյ։ Ի խոր քնոյ զեշերոյ զարթո՛ զիս գոհանալ և օրհնել ըզքեզ՝ որով զմեղս իմ քաւեսցես։ Շնորհեա՛ ինձ սուգ և արտասուս լալոյ և սգալոյ. և անդադար աղօթելոյ առաջի քո։

(ՃԺԳ)

Պատեա՛ տէր զդատապարտօղն իմ որ յանդգնէ ՚ի վերայ՝ մարտ եդեալ ընդ իս յան-

 կու

կութեամբ և անժուժկալութեամբ․ ծու-
լութեամբ և որկորստութեամբ․ փառա-
սիրութեամբ և մարդահաճութեամբ․ բար-
կութեամբ և սրտմտութեամբ․ ատելու-
թեամբ և չարաչար հայհոյութեամբ․
սնափառութեամբ և սնապարծութեամբ․
հպարտութեամբ և ամբարտաւանութ՟բ․
բանիւք և գործովք և խորհրդովք զորա-
ժողովն լինել 'ի վերայ իմ․ և ընկղմել զիս
'ի խորս չարեաց։

(ՃԺԴ)

Առաքեա՛ տէր զշնորհս քո 'ի վերայ մասանց
անդամոց իմոց․ լցո՛ տէր զմարմին իմ արի-
ութեամբ և ժուժկալութեամբ․ և զհո-
գիս իմ երկիւղիւ և գթութեամբ․ զսիրտ
իմ սիրով և արդարութեամբ քո, և զմիտս
իմ լուսով և իմաստութ՟բ քո․ զխորհուրդս
իմ հանճարով գիտութեան քո, և զոտս
իմ գնալ 'ի շաւիղս արդարութեան և զբե-
րան իմ անդադար սաղմոսել քեզ գոհու-
թեամբ և օրհնութեամբ․ զաչս իմ յորդա-
բուղխ արտասուօք․ և զհաստատելիս իմ



հո

հաստատել զհոտ գիտութեան ՚ի կեանս• զլ-
սելիս իմ լսելով զձայնն աւետեաց որ ասէ•
թողեալ լիցին քեզ ամենայն մեղք քո•

(ՃԺԵ)

Մինչև յերբ անսաս տէր չար գործողին•
որ ոչ յագի խմել կորուստեամբ• այլ համա-
պազ սկիզբն առնէ չարեաց• և ՚ի բաց
կորզեալ խափանէ զիս ՚ի բարեաց և յա-
ռաքինութեց• և հեռացուցանէ զիս ՚ի-
սրբութեց• և ՚ի յաւիտենից կենաց արտա-
քս հանէ զիս։ Խաւարեցուցանէ զլուսա-
ւորուի աչացս• և ապականելով գերէ զմ
իտս իմ• և վարէ զիս ՚ի չար ծառայուի
յանցանաց• ՚ի ձեռս անօրէն դահճացն
մատնէ զիս• և տանի ՚ի տեղի չարչարանաց•
և արկանէ ՚ի բանտ կապանաց մահու• կա-
ցուցանէ ՚ի մէջ խաւարասէր ապաստաւորաց•
և ՚ի տառառունս մեղաց կապէ զիս• և արդ
ես եղկելիս զի՞նչ լինիցիմ• եթէ ոչ դու
տէր օգնես ինձ։

Տես տէր զլալիս և զողբալիս• զդառնա-
ցելիս և զեղկելիս• ինձ ողորմեա անօրի-



նե

նեղոյս. և շնորհեա՛ ինձ յորդ արտասուս 'ի գիշերի, և նշոյլ շնորհաց քոց յառաւօտէ։ Բա՛ց զխաւարեալ աչս սրտի իմոյ՝ և բժշկեա՛ զհիւանդացեալ հոգիս իմ. ընկա՛լ զդարձ մեղաւորիս և մի՛ բարկանար բազմամեղիս տէր իմ Յիսուս. և քանզի անթիւ ունիմ զչարիս՝ ջնջեա՛ յինէն և տո՛ւր ինձ զշնորհս բարեաց։

(ՃԺԷ)

Համարձակիմ տէր աղօթել առ քեզ. խնդրեմ և ոչ գիտեմ. զօգտակարն հոգւոյս յայտնեա՛ ինձ ողորմած տէր զկամս բարիս. և ուսո՛ ինձ զպատուիրանս քո։ Զբարին՝ զոր ոչ խնդրեմ և գիտեմ տէր ինձ տուր. և եթէ չգործեմ զբարիս, բարի՛ արա ինձ տէր. և եթէ ոչ խնդրեմ զողորմութիւն, ողորմութիւն շնորհեա՛ ինձ տէր. և զհեռացեալս առ քեզ կոչեա՛. և եթէ ոչ կամիմ, բռնաւորեա՛ և 'ի քեզ կորզեա՛. և եթէ ոչ կամիմ, դարձո՛ զիս. և եթէ ըմբռնիմ յումեքէ, զերծո՛ զիս. եթէ յերկրաւորս զբաղեցայ՝ 'ի խորհուրդս հո-



գւ

գեորս զբաղեցո՛ զիս. եթէ՞ այսր և անդր գնալ ցնդելով, մի՛ թողուր զիս մինչև ըմբռ-նեալ տարցես 'ի տեղի յարկի փառաց քոց:

(ՃԺԸ)

Ա՛ն հայեր տէր իմ յեղկեալ սիրտս և 'ի զազրաւէր մարմինս. զի հող եմ և մոխիր. սիրեմ զերկրաւորս և ոչ փափագիմ նայե՛լ յերկնայինսն. այլ միշտ հեշտանամ 'ի չա-րիս. և ոչ տեսանեմ զանվախճան փառսն: Եւ ոչ յիշեմ զառաջին սուրբ հարսն զե-րանեալսն. այլ 'ի տիղմն աշխարհիս թա-ւալիմ. և ոչ մաքրեալ մերձանամ դասիլ ը առաքինիսն: Եւ զի մոռանամ զերկիւղ դատաստանին. և ոչ դողամ յահագին դառն տանջանացն՝ որ կայ պահեալ մեղաւորաց. և ես ծուլանամ անհոգ լինելով 'ի փրկու-թենէ կենաց. շնորհեա՛ ինձ տէր սուգ և կոծ անհանգիստ. և արտասուս ապաշա-ւանաց:

(ՃԺԹ)

Անյանդիմանելի ըզիս տէ՛ր յաւուրն մեծի ահե-

զին. և մի՛ յատենի հրապարակին կացուցա-
ներ զիս ամօթալի. և 'ի տեղի ատենի մի՛
խայտառակեր զիս. և մի՛ կշտամբեր յա-
տեան դատաստանին. և մի՛ թողուր ինձ
զոչ գիտեմն լսել. և զահաւոր բարբառն
ահարկու՝ որ ասէ. երթայք յինէն 'ի հուր
գեհենին: Եւ մի՛ 'ի բաց մերժեր ընդ վատ
և ը̃ չար ծառայի. և 'ի ձեռն անօրէն
կապողի մի՛ մատներ զիս. և մի՛ տար կերա-
կուր որդանց թունաւորաց 'ի մէջ բորբոքել
բոցոյ. և մի՛ արկաներ զիս 'ի խաւար սա-
նամանեացն տարտարոսին: Այլ փրկեա՛ զիս
'ի սաստիկ կայծականց հրոյ. 'ի բոցեղէն
գետոց արշաւանացն. 'ի սաստիկ լալագին և
խիստ տանջանացն. և յողբոց տարակու-
սանաց. 'ի կափկափելոյ ատամանցն և 'ի-
տարաւելի կսկծանաց. 'ի տաչարմանէ խաւա-
րային բոցոյն, և 'ի դժնդակ դառն աղէ-
տից խորովելոյն. 'ի բոցածաւալ և 'ի շըր-
ջապատ հրոյն. և 'ի կուլկողաձայն և յան-
դադար վայոյն փրկեա՛ և ազատեա՛ զիս
Տէր:

(ԾԻ)

Բազմացաւ տէր անօրէնութի՟ 'ի վե՛ր իմ, իբրեւ զբեռն աղի կամ կապարի՝ բարձեալ է ախտ 'ի հոգիս իմ. եւ անխտիր եմ 'ի մեղս մարմնոյ. եւ զանազան չարեօք լցեալ եմ։ Բայց այլ ինչ ունիմ վատթարագոյն՝ զանզգայութիւն մարմնոյ՝ որ քան զամենայն չարիս է դառնագոյն. եւ զի յաղօթելն իմում ձանձրանամ. եւ 'ի սաղմոսելն ոչ խնանամ. 'ի խնդրել զերանութի՟ պղերգանամ. եւ յերկիւղէ շնորհաց դատարկանամ. անկաբանամ մարմնովս եւ արձան աղի սիրտ իմ լինի. եւ ոչ ծագէ 'ի ներս լոյսն անշիջանելի. եւ յաւուրն չարի ոչ ապաւեալ դողամ։

(ԾԻԱ)

Շնորհեա՛ ինձ տէր՝ երկիւղ սրբութեան եւ սգոյ. եւ յորդորեա՛ առ իս աղբիւրս արտասուաց. թեթեւացո՛ զծանրութիւն բեռանց իմոց. եւ ածեցո՛ առ իս սուրբ աղօթս փութացի՛ր տէր եւ եկ 'ի խնդիր մոլորելոյս. որ մերձեալ եմ 'ի վախճան կորստեան. վասն զի խաւարեցայ 'ի լուսոյ. եւ 'ի սի-

քոյ պատուիրանաց քոց խափանեցայ · 'ի-
չար թշնամւոյն յաղթեցայ՝ և նուաղեցայ
յերկիւղէ քումմէ ։ Տապալեցայ 'ի չար
խորհրդոց չարին՝ և ցամաքեցայ 'ի շնոր-
հաց առատատուաց սիրոյ քո · խաբեցայ
յունային բանից՝ և 'ի լուսաւորութենէ մը-
տաց մոլորեցայ · աղտեղեցայ մեղօք՝ և զօր
վախճանին մոռացայ ։

(ԺԻԲ)

Տարակուսիմ անյոյս լինելով՝ որ ոչ գոյ
հնար ապաշխարութեան · զի մարմնով
տկարացայ՝ պակասեալ 'ի զօրութենէ · և
ծերացեալ նուաղեցայ ։ Սակայն 'ի քեզ
ապաւինիմ տէր Յիսուս հասէր յօգնու-
թիւն ծանրաբեռնեալ ընկղմելոյս · և ազա-
տեա զիս 'ի չարեաց · որ ազատիչդ ես 'ի-
յանցանաց ։

(ԺԻԳ)

Ընկալ տէր զգոյզն շաղփաղփ աղօթս իմ ·
որ կամ առաջի քո դատապարտեալ · այլ
և ծոյլ 'ի զգաստութենէ · մոլորեալ եմ
'ի մտաց և յերկիւղէ ունայնացեալ եմ ։

Բերան իմ այլընդ այլոց բարբանջէ . աչք իմ աղշնու . և միտք իմ զբաղնու : ոչ ան-զբօս աղօթեմ . և ոչ սրտի մտօք խնդրեմ . ոչ հաւատով առ քեզ գոչեմ . և ոչ երկիւ-ղիւ կարդամ . ոչ արտասուօք հայցեմ , և ոչ դողամ և սարսիմ վասն աւուրն պատա-խանատուութեանց:

Դու արդ տէր՝ մի՛ անսար . այլ փութացես ձրի յապաշխարութիւն և 'ի բուժս մաքրու-թեան հրոյ սրբեալ և ազատեալ 'ի - մեղաց:

Մեծաւ ջերմամբ եռացի՛ և 'ի յորդոր արտասուս և 'ի պաղատանս և 'ի խնդր-ուածս . և տպաւորեմ յիս զառաջին լուսա-ւորութեան կերպարանն:

(ՈԴԴ)

Ողորմեա՛ տէր մեղաւորիս՝ յանցաւորիս անթիւ բազմութեամբ և դարձո՛ յապաշ-խարութիւն զգերիս վտարանդեալ . և մերժ զիս յաքունական վառան : Առաջ-նորդեա՛ ինձ զվերին ճանապարհն գալ առ-

քեզ. զի եթէ դու ոչ առաջնորդեսցես ինձ, ես ոչ կարացից գալ. զի դու իսկ հրամայեցեր. եթէ ոչ ոք գայ առ իս՝ եթէ ոչ Հայր իմ ձգեսցէ զնա: Արդ տէր իմ գթած՝ մի յիշեր զմեղս իմ յաճախ լըր-բութեանս՝ և զանց առներ ՚ի ծառայէս քումմէ. մի թողուր զիս մնալ ՚ի նոյն չարիս՝ և ՚ի կեանս աշխարհիս սպառիլ. այլ որպէս ընթացեալ զկնի ծառայի փա-խուցելոյ՝ այսպէս դարձուցանելով զիս թող-ցես զյանցանս իմ՝ և արասցես հաղորդս սրբոց կամարարաց քոց:

(ՃԻԸ)

Դարձո տէր զցասումն բարկութեան քո յինէն, որ մեղօք բազմօք իմովք սրտմտե-ցուցի զքեզ: Ողորմեա ապստամբելոյս ՚ի քէն. և զանհնարին դիզեալ կոյտս մե-ղաց իմոց ցրուեա. ընդ քաղցր լծոյ ծա-ռայութեան քո բևեռեա զմիտս իմ:

(ՃԻԹ)

Պարգևեա ինձ տէր Յիսուս զլալումն դաւթի և զողբումն երեմիայի. զհառա-



չումն

ջունս պետրոսի՝ և դղորդառատ վտակս արտասուաց կնոջն պոռնկին. զի նստեալ լացից անդադար ՚ի տուընջեան և ՚ի գիշերի. զի արժանի եղէց սրբիլ ՚ի յաղտոյ և ՚ի թարախոյ. և յորդնալից վիրաց զերծանիլ. և ՚ի բազմաբեռն չարեաց թեթեւանալ՝ և դասիլ ընդ սուրբս քո։

## (ՃԻԱ)

Ողորմիլ ինձ տէր մի՛ յամենար. զի աւանց քո վաստակելոյ յիս՝ ոչ երբէք գործի բարի. և ոչ սերմանեալն յանդս հողւոյ իմոյ բուսանի. զի սերմն բանի քո որ յիս սերմանեցաւ՝ ՚ի չար թշնամւոյն քաղեցաւ. և բուսեալն՝ ոմն ՚ի տապոյ չորացաւ. և ոմն ՚ի մէջ փշոցն անկեալ հեղձեալ ցամաքեցաւ. մշակելով քո յիս տէր՝ ընձեռ զերկուս աչս եղանց որ յիս՝ արտասուագոչ ձայնիւ պաղատիլ առ քեզ յարաժամ. զի արժանի գտայց ողորմութեան քում։

## (ՃԻԲ)

Շնորհեա տէր զխաղաղութիւն եկեղեց-

ւոյ քումորդւոյ • և ամենայն հաւատացելոց թագաւորաց և իշխանաց՝ զօրաց և զօրաւորաց ՚ի ճակատու պատերազմաց՝ յաղթել անօրէն բռնաւորաց։

(ՃԽԹ)

Աղօթեմ տէր առաջնորդաց եկեղեցւոյ՝ հայրապետաց և վարդապետաց • երիցանց՝ սարկաւագաց՝ դպրաց՝ և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ առնել զիրաւունս և զարդարութի յամ ժամ • հովուել զժողովուրդս քո • ուղղել վասն հոգւոց նց աւելով ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետուր ցիս։

(ՃԾ)

Աղօթեմ տէր Յիսուս Քրիստոս կարօտելոց և տարակուսելոց • որբոց և այրեաց • տնանկաց և տանց հաւատացելոց • կենդանեաց և ննջեցելոց • և որք ընծայաբերք են եկեղեցւոյ։ Աղքատաց ՚կերակրողաց՝ ողորմածաց՝ երկիւղածաց՝ և հիւանդաց • նաւորդաց և ճանապարհորդաց • խոստովանողաց և ապաշխարողաց • և անդարձ մեղաւորաց • ողորմեա տէր և դարձո զնոսա յապաշխարութի։



Աղօ

(ԺԸ)

Ողորմեա՛ Տէր եղբարց մերոց կրօնաւորաց. և միաբանից ճգնաւորաց. և որք յանձն ա-րարին զիւրեանս յաղօթս մեր յիշել. ողոր-մեա՛ բարերար և բոլոր իւրաքանչիւրոց պի-տոյից: Բաշխեա՛ առատապէս զշնորհս հոգ-ւոյդ սրբոյ ՚ի վերայ ամենեցուն նոցա. և զարդարեա՛ և միացո՛ ՚ի սէր ամծութեան քո.

(ԺԹ)

Աղաչեմ Տէր Յիսուս՝ և անկանիմ առաջի քո սուրբ խաչին. բարեխօսութեամբ սորա զաղաչանս իմ ընկալ. և զխնդրուածս իմ կատարեա՛. և զօրութեամբ սորա զօրացո՛ զիս ՚ի կոչմանս յոր կոչեցայ. և ՚ի պատուի-րանս քո զոր ուսայ: Տո՛ւր ինձ Տէր զա՛ ՚ի զօրութիւն և ՚ի ժուժկալութիւն՝ ՚ի-զգաստութիւն և յառողջութիւն՝ լինել պա-հապան անձին իմոյ ՚ի տունջեան և ՚ի գի-շերի և յամենայն ժամու. ՚ի նստել և ՚ի-յառնել. ՚ի գնալ և ՚ի դադարել. ՚ի գործս և ՚ի վաստակս. յաղօթել և ՚ի պա-հել. և զհաճոյս կամաց քոց կատարել:

Ամ եղիցի ինձ բերդ ամուր և աշտարակ հզօր յերեսաց Թշնամւոյն. զարդարեա զիս սովաւ 'ի զարդ հոգեղինաց՝ և 'ի լոյս անի-մանալի: Եւ յաւուրն ահեղի բարբառոյ գաբրիէլի յերեւիլ սրբոյ խաչիդ՝ լուսաւոր-եա զխաւարեալ հոգիս. մերձանալ լուսով ընդ առաջ անմահ փեսայիդ. խառնիլ յե-րամս հայրապետաց. և 'ի դասս մարտիրո-սացն և 'ի գունդս հրեշտակաց:

(ԾԳ)

Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուա-ծածնիդ և անարատ միշտ կուսիդ. և Յով-հաննու կարապետին. Ստեփաննոսի առա-ջին մարտիրոսին. և սրբոյն Գրիգորի լու-սաւորչին. և ամ̃ սրբոց վկայից քոց լո՛ւր ինձ եղկելւոյս:

Եւ գլորելոյս ձեռնտու լեր. և մոլորե-լոյս առաջնորդեա և 'ի խաւարէ հանցես զիս 'ի լոյս. և հոգւոյ իմոյ ազատութիւն շնոր-հեա: Հաստատեա 'ի սէր քո. և բեւեռեա յերկիւղ քո. զտաճար հոգւոյ իմոյ մաք-րեա և առ իս օթեւանեա:

փակեալ զդուռն՝ մեղաց իմոց. և պարըս-պեալ շուրջանակի յոսոխէ՛ իմմէ: Եւ ՚ի մարդոյ չարէ և յանիրաւէ փրկեալ և ազա-տեալ զիս առաքինութեամբ. և պարգևեալ ինձ զանճառ երանութիւն քո: Կենդա-նեաց մերոց ողորմեա. և ննջեցելոց մերոց պայծառացեալ լուսաւորեա:

## (ՃԼԴ)

Բարեխօս առ քեզ ունիմք զառաքեալսն և զմարգարէսն. և զամենայն սուրբ մար-տիրոսն. զհայրապետսն և զվարդապետսն: Սուրբ աղաչանաց նոցա և ազատեա զիս ՚ի մեղաց իմոց. տնկեա յիս հոգի շնորհաց. և յորդորեա զիս բարիս գործել. ՚ի ծու-լանալն իմում բռնաւորեա. խափանեա զիս ՚ի չար գործոց և սերմանեա յիս պտուղ բարեաց: Բաժանեա զիս ՚ի նենգութենէ իմմէ. մխիթարեա ՚ի վշտի. արժանի ա-րա զիս տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս՝ լինել քեզ խաչակից մինչև ցմահ. որպէս զի ՚ի հեշտութեանց աշ-խարհիս հրաժարեցից. և եղէց երանե-

լեայն գաւառկից . և աւազակին եղեց հա-
զորդ . և 'ի դրախտին վայելեցից զկեանս
անմահս :

(ՃԼԵ)

Յաւուրն 'ի վախճանի՝ հրեշտակ բարի ինձ առաքեա . և քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ . ընդ ուղիղ ճանապարհի առաջնորդեա . և զգազանն դառնակալ կործանեա . անցո զիս անխռով ընդ օդս խաւարայինս . և զերծո 'ի չար ժանեաց գազանին . արարեալ և աներկիւղ պահեա . և 'ի կայանս սրբոյն հանգո , սպասել և այն ունել զալստեան քո :

(ՃԼԶ)

Յորժամ գաս յերկնից ահեղ փառօք և անթիւ զաւրօք հրեշտակօք , զարհուրեալ դողան առ հասարակ տարերք ամենայն՝ երկնայինք և երկրայինք . յանկարծակել քո զօրութեանդ՝ աւրուին յահեղ փառաց անմահ Թագաւորիդ և անճառ դատաստանիդ և աններելի պատուհասիդ .

(ՃԼԷ)

Յայնմ աւուր և զիս ընկալ՛ տէր ընդ արդարս և ընդ կատարեալս քո. և կարգաւորեա ընդ աջմէ դասուն. և դասակեա ընդ սուրբս քո. և շնորհեա ինձ զկեանս յաւիտենից. և զանճառ բարիս քո պարգևեա ինձ. և քեզ փառք մատուցից՝ և պարգևողիդ իմոյ բարեաց ։

(ՃԼԸ)

Յիշեա տէր զհոգիս ննջեցելոց մերոց յաւուր մեծի քում գալստեանդ՝ յորժամ գաս յերկնից անճառ փառօք. ահեղ և սոսկալի զօրօք. հրանիւթ և հողեղէն զուարթնօք։ Ահաւոր հուր առաջի քո ընթացեալ տարածանի. կիզէ զերկինս՝ և հալէ զերկիրս. և զարարածս ամենայն առհասարակ տապալէ։ Յայնմ աւուր ահեղին ողորմեա ինձ մարդասէր. զի գին սուրբ արեան քո եմ.

Յորժամ զաղբիւրս ցամաքեցուցանես՝ և զը

զգնացս դևաց զաղաւաղեցուցանես․ զծո֊
վու ջրոյն զանբաւութիւն սպառեցուցա֊
նես․ զլուսաւորս խաւարեցուցանես․ փողն
ահագին ընդ տիեզերս ամենայն հնչէ․
և զմեռեալսն զամենայն զարթուցանէ․ և
զաշխարհս ամենայն դողացուցանէ․ և ա֊
րարածք ամենայն յարուցեալ կան առաջի
աստուածութեան քո։ Յայնժամ դնես
զդատողական աթոռ քո․ և ընդ քեզ
բազմեցուցանես զերկոտասան առա֊
քեալսն։

Անաչառ դատաստանաւ դատես․ յամե֊
նեցուն արդարութիւն պահանջես․ զկա֊
մարարս քո պատուես՝ և զապստամբեալսն
՚ի ձայնէ կոչմանն քո՝ պատժես․ և զարդարսն
փառաւորես․ զմարտիրոսսն և զսուրբ վ֊
կայսն պսակես․ զիմաստուն սուրբ կու֊
սանսն զարդարես․ և յիմար կուսանացն
զառագաստին դուռն փակես․ և ՚ի փա֊
ռացն երանութեան հալածես․ զոչխն
քո ընտրես, և զայծիսն ՚ի քէն ՚ի բաց մեր֊
ժես․ և ՚ի գեհեանն առաքես՝ ուր լալումն

է աչաց. և դառնադոյն կսկիծ ահեղ տան-
ջանաց. և հրեղինաց չար որդանց թեւ-
նաւորաց կատաղացն կրծմանն տառա-
մանց :

## (ԺԹ.)

Որդ՝ գթա՛ և յիս յայնժամ մարդասէր տէր և բարերար փրկիչ իմ Յիսուս Քրիստոս. և ողորմութեամբ քով զը-թափցես ՚ի հոգիս ննջեցելոց մերոց՝ որք հաւատով ՚ի քեզ ննջեցին. զորս յարու-ցեալ կացուսցես առաջի ահաւոր քո մե-ծի դատաստանիդ՝ յայն ահեղերական հրա-պարակին ահեղ :

Յորժամ յայտնին գործք բարւոյ և չարի անթաքչելի ՚ի մէջ ատենին՝ յայնմ ա-ւուր ահեղի թողութիւն շնորհեա՛ յու-սացելոց քոց. որք յանուն քո սուրբ նըն-ջեցին յերկրի. զոր գնեցեր պատուական արեամբդ քո :

Ջնջեա՛ զձեռագիր ամենայն մեղուցելոց ՚ի քեզ. և թո՛ղ զպարտիս յանցանաց ա-մենայն հաւատացելոց. զկամակից և զա-



կա

կամայից · ընդ այժմ քումմէ դասեամ · և զերանական պճայլն ՚ի լուսոյս ամենայն հա-ւատացելոց ուխտաւորանեամ ասելով · եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զյա-ւիտենից արքայութիւնն :

(ԾԱ)

Որդի՝ տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս՝ բարերար ողորմած և մարդա-սէր՝ անոխակալ և անյիշաչար՝ ընկալ զա-ղօթս և զխնդրուածս իմ · որպէս պաղա-տիմ և հայցեմ ՚ի քէն վասն իմ և վասն ա-մենայն հաւատացելոց · մի դարձուցաներ զերեսս քո ՚ի ժողովս · այլ խոնարհեա՛ յաղաչանս իմ · և լուր ինձ մարդասէր · և ցոյց յիս զառաւելական քո մարդասիրու-թեանդ զողորմութիւն · և խնայեա ՚ի մե-ղուցեալ ծառայս քո : Եւ կարգեամ զիս ընդ այժմ դասուն · և մի կացուցաներ ՚ի ձախմէ ընդ ուլսն՝ որք զայրացուցին զքեզ · և մի պահանջէր յինէն զանհամար պարտիս յանցանաց իմոց : Եւ մի դատա-պարտեր զմեղաւորս յայնժամ · և մի

 Յայտ

յայտնեսցին ծածուկք գործք ամբարշ-
տութեան իմոյ յանցանաց յանաչառ
ատենին՝ հրեշտակային տեսանողաց եւ
հրեշտակապետաց եւ ամենայն սրբոց
քոց սիրողաց • այլ յաղթեալ ՚ի քումմէ
մարդասիրութենէդ արասցես այցելու-
թիւն մեղուցեալ ծառայիս քո • եւ մի՛ ըստ
չար գործոց իմոց հատուսցես ինձ։

Եւ մի՛ հրամայեր կապեալ ոտիւք եւ ձե-
ռօք հանել ՚ի խաւարն արտաքին • ուր
լալ աչաց է եւ կրճտել ատամանց • այլ
ըստ քում գթութեանդ եւ բարերարու-
թեանդ եւ անյիշաչարութեանդ՝ ողորմեա՛
ինձ բազմամեղիս։

Յայնմ աւուր զերծո՛ զիս յամօթոյն յա-
ւիտենից • եւ փրկեա՛ զիս յանվախճան
տանջանացն • ապրեցո՛ զիս յաններելի պա-
տուհասիցն՝ եւ բաց ինձ զդուռն ողոր-
մութեան քո • եւ մի՛ փակեր զդուռն Ար-
քայութեան տէր իմ տէր՝ Աստուած իմ
Աստուած իմ Յիսուս Քրիստոս։

 Ամ

Արժանի արա զիս զանարժանս յաւուրն յայսմիկ երանութեանց և անապականութեան պարգևաց լուսոյ. և անսպառ յաւիտենից ուրախութեանց. և բարեաց հատուցմանց սրբոց և արդարոց. և զխառն երանելեացն վայելել միշտ: Ով մոլից արժանապէս յառաջադաստ անմահ փեսայից. և ժառանգեցից զանսպառ բարիսն ընդ ամենայն սուրբս քո՝ մաքուր և յստակ և սուրբ սրտիւ՝ համարձակ երեսօք: Անհաս տեսից զքեզ ընդ հրեշտակս և ընդ սուրբ սիրօղս վայելեցից զանհաս զանճառելի և զանեզր լոյս Երրորդութեանդ՝ զոհանալով. և զուգահաւասար արասցես ընդ սուրբս քո յօրհնաբանութիւնս միշտ արժանապէս. հանապազ աստուածային անստուեր լուսով քո պայծառացայց: Եւ անդադար երգով փառաւորեցից զամենասուրբ Երրորդութիւնդ.

այժմ և յաւիտեանս

յաւիտենից

Ամէն:



Տէր

Բ

Մեծ զօրութեանց՝ աղաչեմ զքո բարերարութիւնդ. ժտեմ եւ հայցեմ ՚ի քէն. տուր ինձ տապան ապրեցուցիչ որպէս Նոյին. ապրեցուցիչ ինձ ՚ի հրեղէն ծովէն եւ յանդնդային հրահոսանացն. յանշէջ արգելանէն եւ յանհնարին վտանգէն։ Զի դու ես տէր աստուած՝ որ զբանդ աստուածային ծածկեցեր եւ ՚ի ծառայական կերպս իջեր վասն իմ. զլեղի ՚ի քիմս առեր եւ ապտակ ՚ի ծնօտս ընկալար։ Եւ այժմ աղաչեմ զքեզ՝ ազատեա՛ զիս ՚ի դառն ծառայութենէն սատանայի. զի յորժամ զձեռս իմ ՚ի վեր ունելով աղօթեմ, անօրէն սատանայ խաբէ եւ ունայն հանէ զիս ՚ի յաղօթից իմոց. Տո՛ւր ինձ աստուած բերդ ամուր. եւ կորզեա՛ զիս յաւխծոյն որ հանապազ կամի կլանել զիս.



Զի

Զի ընդ ամենեսին փառաւորեցից 'ի բաղ-ձայնս զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին· այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

---

Նորին աղօթք սրբոյն Եփրեմի պէս պէս հայցուածովք.

Գ.

Տէր Յիսուս Քրիստոս երկնի և երկրի· իշխան կենաց և մահու· դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Քրիստոս Աստուած յոյս և ապաւէն հոգւոյս իմոյ՝ քեզ խոնարհեցուցանեմ զերկրպագութիւնս և մատուցանեմ զփառաբանութեան մաղթանս։ Տէր պարգևեա հայցուածոց իմոց՝ որ միայն ես առանց մեղաց· որ միայն ես սուրբ և 'ի սուրբս հանգուցեալ· որ միայն ես գթած և ողորմած։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում· և ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։ 62 Աստեղ

Ստեղծիչ իմ ողորմեա՛ ինձ և օրհնեա՛ զիս, երևեցո՛ զերեսս քո առ իս և հաշտեա՛ ընդ իս ։ Ապրեցուցիչ իմ դարձ առ իս և երևեցո՛ զերեսս քո և յիշեա՛ զիս յար-քայութեան քում ։

Դարձ առ իս Աստուած փրկիչ իմ. և դարձո՛ զարտմութիւնս քո յինէն։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ. և մի՛ դար-ձուցաներ զերեսս քո յինէն։

Մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս. և մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ. և մի՛ յի-շեր զչարիս իմ. և մի՛ պարտաւորեր զիս ըստ իմում անօրէնութեանս։

Մի՛ իսպառ բարկանար ինձ. և մի՛ յա-ւիտեան պահեր ոխս։

Մի՛ ըստ մեղաց իմոց առներ. և մի՛ ըստ անօրէնութեանս իմում հատուցաներ ինձ։

Մի՛ ընկեներ զիս յերեսաց քոց. և մի՛ խնդրեր զվրէժ յանցանաց իմոց. և մի՛ դա-տապարտեր զիս. զի ես ինձէն գիտեմ որ անուղղայ եմ և յանցաւոր ՚ի մանկութենէ.



և

և անպատասխանի եմ յամենայնի ։

Այլ դու դատաւոր հզօր և անոխակալ՝ որ զյանցանսն թողեր անառակ որդւոյն՝ Թող և ինձ զպարտիս՝ մեղուցեալ և անօրինեալ քո ծառայիս ։ Քանզի քո առատ բարերարութիւնդ յայնժամ երևեսցի, յորժամ ինձ ողորմիս ․ որ չեմ արժանի ողորմութեան քում, յորժամ յիս ցուցանես զերկայնմտութիւն քո ․ որ արժանի եմ բիւրուց տանջանաց ․ զի զամենայն աւուրս իմ անառակութեամբ անցուցի և ոչ կացի ՚ի հրամանի քում ։

Արդ քաղցրացիր ինձ բարի և քաղցր Թագաւոր ․ և հաշտեաց ընդ բազմամեղիս ․ և մի դարձուցաներ զերեսս քո յինէն ․ և մի խոտորեր բարկութեամբ ՚ի ծառայէ քումմէ ։

Մի հայիր յանհնազանդութիւնս իմ և ՚ի պղերգութիւնս ։ Մի անարգեր զիս և մի թողուր զիս ․ և մի ընդ վայր հարկաներ զիս ․ զի թէպէտ ես զտաճար հոգւոյդ սրբոյ ապականեցի իմով ծուլութեամբս և ա-



նա

նաւակ զնացիւքս , այլ դու գԹա՛ յիս ս-
տեղծիչ իմ ողորմած և անյիշաչար . և մի
ապականեր զհոգի իմ գեհենաժառանգ-
այրմամբ յաւիտենականաւ ։

Այլ գԹացեալ մարդասիրապէս՝ երկայ-
նամիտ լեր առ իս . և ներեա՛ յանցանաց
իմոց ։

Եւ շնորհեա՛ ինձ ժամանակ ապաշխա-
րուԹեան և զղջման արտասուաց . և տո՛ւր
իմաստուԹեամբ խորհիլ զօրէնս քո 'ի-
տուէ և 'ի գիշերի . գործել զբարի և
առնել զարդարուԹիւն առաջի երեսաց
քոց ։

Համբառնամ առ քեզ տէր զաչս իմ բո-
լորովն սրտիւ իմով . կարդամ առ քեզ
Քրիստոս աստուած միածին որդի աս-
տուծոյ՝ կերպարան անեղին և համագոյ
սբ Հոգւոյն ։

Որ յաղԹեալ 'ի մարդասիրուԹենէդ քում-
մէ , կամաւ խոնարհեցար յանճառ փա-
ռացդ և առեր զծառայի կերպարանս .
և անպարտականդ՝ յաղագս դատապար-

տութեան մերոյ համբերեցեր մինչև ընդ
չարչարանս խաչի և մահու յանձն առեր
վասն փրկութեան ստեղծուածոց քոց ։
Արդ՝ որ պայպախի սէր ունիս առ ազգս
մարդկան՝ և կամիս զի ամենայն մարդ կեց-
ցէ և 'ի գիտութիւն ճշմարտութեան ե-
կեսցէ, գթա՛ և յիս 'ի բազմամեղս գթած
և մարդասէր տէր․ և կամեցայ ընդ իմ փր-
կութիւնն և արա՛ ինձ ողորմութիւն եղկել-
ւոյս և թշուառականիս․ որ առաւել վիրա-
ւորեալ եմ և ողորմելի քան զամենայն
մարդիկ ։

Զի ոչ և մի օր սիրեցի զքեզ 'ի բոլոր
սրտէ իմմէ․ և ոչ մի ժամ յամենայն զօ-
րութենէ իմմէ պահեցի զպատուիրանս քո․
այլ պղերգութեամբ և զբօսանօք անցու-
ցի զաւուրս իմ․ և աղտեղի խորհրդովք ան-
ցուցի զամենայն կեանս իմ ։

Առաւելք իմ պակասեցան և անօրէնութիւնք
իմ բարձրացան․ և ոչ գոյ ինձ յոյս փր-
կութեան և տեղի ապաւէնի․ բայց միայն
յուսացեալ եմ 'ի քո բարերարութիւնդ,



և

և ապաւինեալ յառատ ողորմութիւնդ.

Եւ արդ՝ անկեալ բղխմամբ արտասուաց աղաչեմ զքեզ. պաղատիմ մինչչև եմ կորուսեալ. և մինչչև է ժամանակ դարձի իմոյ հասեալ. շնորհեա ինձ ապաշխարութիւն. և յառաջ քան զվախճան արձակեա զիս 'ի կապանաց մեղաց իմոց. և անտես արա զանթիւ անօրէնութիւնս իմ:

Որ ամենայն բարութեանց ես տէր. և իշխանդ ես Թողուլ զմեղս՝ ծածկեա զամ անօրէնութիւնս իմ. քոյով մեծութեամբդ. և մխիթարեա զվշտանկեալ և զտառապուսեալ հոգի իմ:

Եւ արժանաւորեա զիս յայսմհետէ ըստ կամաց քոց քաղաքավարել զայլ ևս պանդխտութեան իմոյ ժամանակս. եթէ չկամիմ, բռնադատեա զիս. և մի թողուր 'ի կամս անձին իմոյ. մինչև տարեալ հասուսցես յօթևանս արքայութեանդ երկնից:

Տէր տէր աղօթից անարժան ծառայիս քո. և պաղատանաց իմոց ունկն դիր:



Որ

Որ ասացեր թէ՝ հայցեցէք և գտջիք· բախեցէք և բացցի ձեզ ։ Եւ այժմ բաց ինձ տէր զդուռն ողորմութեան՝ որ ողբալով կարդամ առ քեզ· և մի անտես առներ զաղաչանս մեղուցելոյ անձին իմոյ։ որ ոչ եկիր կոչել զարդարս· այլ զմեղաւորս յապաշխարութիւն։

Արդ՝ խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիւ, և ամօթալից երեսօք, անկանիմ առաջի քո· չեմ արժանի կոչիլ որդի քո վասն ապականեալ վարուց իմոց· և ոչ անուանել զանուն քո՝ գարշ և պղծեալ բերանով իմով։

Այլ համարձակիմ 'ի գթութիւն քո· զի գիտեմ զքեզ քաղցր և անոխակալ՝ բազմախնամ և երկայնամիտ առ արարածս քո· և յաղագս այսորիկ ժտելով պաղատիմ առ քեզ։

Եւ յառաջ քան զդնիլ ատենին աղաչեմ· և նախ քան զփակիլ զդրանն ապաշխարութեան և հատանիլ անդարձ վճռին՝ զարտասուս իմ՝ արկանեմ առաջի անոխա-



կալ

կալ գթութեանդ քո մոլորեալ անէր․ եր-
կայնամիտ, քաղցր և անյիշաչար։

Որ ընդ քանքարաթաղուցին դատապար-
տեր զիս․ և մի ընդ յիմար կուսանսն փա-
կեր յինէն զդուռն արքայութեան քո։

Որ ընդ չար և վատ ծառայիցն զիս լծակ-
ցեր․ և մի ընդ հերձուածողսն դներ ըզ
բաժին իմ։

Որ ընդ պոռնկին և ընդ չարագործին
կորուսաներ զիս․ և մի ընդ ախտաւորին
և ընդ շաղախեալին հողւոյ հաներ զիս
ի կենաց։

Այլ զերծո զիս յանդերձ տանջանացն․ և
ապրեցո յանհանգիստ ալէկոծութեանցն․
Փրկեա անմահ ի մահուանէ․ և ազատեա
ի յաւիտենական ամօթոյն․ զերծո ի միշտ
լալոյն և ի հանապազորդ ողբալոյն։

Որ մերժեր զիս ի քո դասուցն․ և մի տա-
րագիր առներ յերանաւէտ կենացն։

Որ անբաժին համեր զիս ի հայրենի ժա-
ռանգութենէն․ և մի զրկեր զիս յերկ-
նաւոր հարսանեացն․

Մի՛ կարօտ պահեր զիս ՚ի քո անճառելի տեսութենէդ. այլ շնորհեա՛ ինձ ընդ արժանաւորսն, և ընդ կատարեալ ոգիսն, վերանալ լուսեղէն ամպօք ընդ առաջ քո յօդս. և պարգևես և աչալրջութեամբ

կալ առաջի քո։

Եւ վասն քո փառաւորեալ հզօր և ահեղ թագաւորութեանդ, մի՛ մտանէր ՚ի դատաստան ընդ ծառայիս քո. և մի՛ հատուցաներ ինձ ըստ իմում անօրէնութեանս. և մի՛ ամաչեցուցաներ զիս առաջի անթիւ

և ահաւոր բանակաց քոց։

Այլ ողորմեա՛ ինձ՝ զի ո՛չ ոք է հակառակ քեզ. և պարգևեա՛ ինձ զարքայութիւնդ։ Ընդ սուրբս քո դասեա՛ և ընդ արդարսն պսակեա՛. ընդ սիրելիս քո օհնեա՛ և ընդ կամարարս կամաց քոց ՚ի յարքայութեան ու-

րախութիւնն ուրախացո՛։

Եւ առատապարգև փառօքդ փառաւորեա՛ զիս տէր ՚ի լուսեղէն երամս արդարոց՝ ընդ նոսին հանգչել ՚ի վերինդ Երուսաղէմ յանստուեր և յանծակեաց ուրախութիւնդ։

Որ ընդ նորին համաձայնեալ փառաւո-
րեցից զամենասուրբ Երրորդութիւնդ.
այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից
Ամէն։

## ԱՂՕԹՔ ՅՈՐԺԱՄ ՅՈՐՈԳԱՅԹ ԱՆԿԱՆԻ ՈՔ· ԱՍԱՑԵԱԼ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԵՐՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ։

Գ.

Օրհնեալ է մարդասիրութիւնդ քո Տէր իմ և Փրկիչ Յիսուս Քրիստոս. ընդէ՞ր լքանես զիս. դու միայն ես առանց մեղաց. և անուն քո զանոխակալութի և զմարդասիրութիւն յուցանէ. գթա յիս՝ վասն զի դու ես միայն մարդասէր։



Ակ

Ապրեցո՛ զիս զանկեալս ՚ի մեղս . զի դու միայն ես առանց մեղաց ։

Հա՛ն զիս ՚ի տղմոյ անօրէնութեան իմոյ զի ընկղմեցայ յաւիտեանս յաւիտենից ։ Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց . քանզի աՀա՛ իբրև զառիւծ գոչէ և մռընչէ կամելով կլանել զիս ։

Արդ տէր իմ փայլատակեա՛ զփայլատակմունս քո . և կործանեա՛ զզօրութիւն նոցա . երկեցեն և խաւարեսցին յերեսաց քոց . քանզի տկար է և ոչ ունի զօրութիւն կալ առաջի քո տէր . և ոչ առաջի սիրողաց քոց ։ Տեսանէ զզօրութիւն նշանի խաչի քո տէր և զարՀուրի . և ամաչելով ՚ի բաց Հեռանայ յայնցանէ որ կարդան առ քեզ ։ Այժմ տէր կեցո՛ և ապրեցո՛ զիս . վասն զի ՚ի քեզ ապաւինեցայ . Հա՛ն ՚ի նեղութենէ զանձն իմ . զի մի՛ խապառ կորուսցէ զիս նենգաւորն որ մարտնչի ընդ իս ծածուկ Հնարիւք ։

Որ խորՀրդոց ես տէր՝ և քննես ըզսիրտս և զերիկամունս՝ սրբեա՛ զսիրտ

իմ և զխորհուրդս ՚ի զաղէր և ՚ի պղծ խոր-հրդոց. զի մի խոպառ կորեայց ՚ի յաւիտե-նական կորուստն:

Որ կարօղդ ես ամենայնի, ողորմեա՛ ինձ ստացուած իմ. տուր շնորհ արտասուաց մեղուցելոյ հոգւոյս. որպէս զի լուացից զաղտեղութիւն մեղացս. զի ապրեցայց ՚ի ձեռաց անողորմ հրեշտակաց որ արկանեն զամբարիշտսն ՚ի հուր գեհենին:

Երանի թէ լայի հանապազ աղաչելով զքեզ ստացուա՛ծ՝ զի մի անարժան գտայց ՚ի ժամուն յորժամ գայցես. և մի լուայց զահաւոր զձայնն զայն, թէ երթ ՚ի բաց մշակդ անիրաւութեան ոչ գիտեմ ուստի ես:

Ստացուած բարձրեալ միայն առանց մե-ղաց. ողորմեա՛ ինձ մեղաւորիս յաւուր յայնմիկ զբազում գթութիւն քո. զի մի յայտնեսցին ծածուկ անօրէնութիւնք իմ առաջի տեսողաց հրեշտակաց և հրեշտակապետաց՝ մարգարէից առաքե-լոց և արդարոց սրբոց.

Այլ աղերսեմ զքեզ զամբարիշտս շնորհօք ո-
ղորմութեան քո։

Ընկալ զիս 'ի դրախտն փափկութեան ընդ
կատարեալ արդարսն։

Ընկալ զաղօթս մեղուցեալ ծառայիս քո
բարեխօսութեամբ սրբոցն որք հաճոյ ե-
ղեն քեզ Յիսուս Քրիստոս Տէր մեր։
Եւ քեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ
փառք յաւիտեանս յաւիտենից
Ամէն։

Սորին աղօթք Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին։

Ե

Աղաչեմ զքեզ փրկիչ աշխարհի Քրիստոս
հայեաց յիս և ողորմեա ինձ.
փրկեա զիս 'ի բազմութենէ ա-
նօրէնութեան իմոյ. քանզի անարգեցի զամ
բարիսն զոր արարեր յիս 'ի մանկութենէ իմմէ.
Զիս զտխմարս՝ զաղէտս և զանիմաստս՝
արարեր անօթ լի գիտութբ. յաճախեաց յիս

 շնորհ

շնորհն քո՝ և լցոյց զքաղց իմ և զծարաւ իմ. զովացոյց և լուսաւորեաց զխաւարեալ միտս իմ. և ժողովեաց ՚ի մոլորութենէ զխորհուրդս իմ, և ելից ՚ի ծոց իմ:

Այժմ երկրպագանեմ և աղաչեմ, անկանիմ և հայցեմ խոստովանելով զքումդ բարերարութիւնդ. կատարեա՛ յիս զխոստումն շնորհի քո և պահեա՛ զնա ՚ի գանձի քում. զի դարձեալ տայցես ինձ յաւուրն յայնմիկ:

Մի՛ բարկանար ինձ մարդասէր. զի ո՛չ հանդուրժեմ ապառնալեաց քոց. յաղագս այսորիկ աղաչեմ ժտելով՝ զի առաւել քան զչափն յաճախեաց յիս. վասն զի լեզու իմ տկարացաւ ո՛չ կարելով խօսել զշնորհս քումդ: Հիացան և միտք իմ ո՛չ բերելով զբազմութիւն ալեաց նորա:

Կերպարան և ճառագայթ օրհնելոյ Հօրդ՝ դադարեցո՛ առիս ՚ի հոսմանց նորա. զի իբրև զհուր բորբոքեալ բոցաւ՝ իլէ զերիկամունս իմ և զսիրտ իմ:

Նուէր դարձեալ պարգևեա՛ ինձ զնա



և

և կեցո՛ զիս յարքայութեան քում. մի՛ յիշեր զանօրէնութիւնս իմ. յանդգնիմ՝ հայցեմ տուր ինձ զխնդրուածս իմ. և արա՛ օթևանս օրհնել հարբ. քո յաւուր

յայտնութեան։

Տնօրհնեա՛ ինձ Քրիստոս զհայցուածս իմ. զի դու միայն ես տուօղ կենաց իմոց։

Եւ քեզ փառք յաւիտեանս

յաւիտենից

ամէն։

## Սրբոյն Աթանասի Եւ սրբոյն աբբայ Եփրեմի Ասացեալ խոստովանութիւն. 34.

Եւ արդ՝ հրաժարելով՝ ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա, ՚ի պատրանաց նորա ՚ի գնացից նորա. և ՚ի պաշտօնէից նորա և ՚ի հրեշտակաց նորա. եկեալ առաջի քո եկեղեցւոյ՝ խոստովանիմ և հաւատամ զՀայր անսկիզբն՝ զՈրդին միածին ծնունդ ՚ի Հօրէ, և զսուրբ Հոգին բղխումն ՚ի Հօրէ. երեք անձամբ և մի

ընութեամբ և մի աստուածութեամբ, անշփոթ միաւորութեամբ ։

Եւ զանճառ տնօրէնութիւն մարդացելոյ Բանին Աստուծոյ ։

Եւ արդ՝ ես դերիս և արտասուելիս և որքան բան զօրէ դարձելիս՝ միզոյ ամենասուրբ Երրորդութեանդ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ Մեղայ և սրբուհւոյ Աստուածածնին և սրբոց հրեշտակաց և ամենայն ընտրելոց սրբոց դասուց։ Մեղայ և սուրբ մարմնոյն Քրիստոսի և պաշտելի արեանն. յիմանալիս և 'ի զգալիս, անդէպ մտածութեամբ աներևոյթ սխալանօք. անճառ խաւարային այլանդակ խորհրդով։ Մեղայ մեղայ և հոգւովս և մարմնովս և մտօքս՝ և բանիւ՝ և գործով՝ և գիտութեամբ և անգիտութեամբ կամաւ և ակամայ Եւ ամենայն մարմնովս, յկ զօղուածովքս, երկոտասան անդամօքս, ե զգայութիւքս ։ Աչօքս յարատ հայելով, և զամենայն գեղեցկութիւն նկարացն զննելով, և զմատթարսն տեսանելով։ Ականջօքս



Հա

չարին ունկն դնելով. և ամենայն քաղցրա-
ձայնութեան:

Հոտոտելեօքս՝ զմեղաց հոտն առնլով և զամենայն անուշահոտութիւնս:

Բերանովս՝ չհամեղամ քաղցրութիւնս ճաշակելով, և զխառնակ և զանսուրբս անզխտութեամբ: Ձեռօքս բազում մեղս շօշափելով: Ոտիւքս յանպատշաճ տեղիս գնալով:

Մեղայ Աստուծոյ մեղայ և վեց շարժմամբքս 'ի վեր՝ հպարտութեամբ, 'ի վայր՝ տրտմութեամբ: Յառաջ՝ յանդգնութբ̃, յետուստ՝ սրտմտութբ̃: Յաջ՝ հոգեկան մեղօք, ձախ՝ մարմնական մեղօք:

Մեղայ և տասն պատգամացն Աստուծոյ՝ յանձնառականին և հրաժարականին. ըզ յանձնառականն չեմ կատարեալ, և զհրաժարականն եմ արարեալ: Անգուցեալ եմ Աստուծոյ և հոգևորական կրիւքս, հասարակ զգայութիւնս և մտօքս. և ամ̃ շփոթմանց հետևելով, և ամբոխելով զիս 'ի յա̃ծահաճոյ հանդարտութենէն հեռացեալ եմ:

Եւ այսպէս խաւարամած լինելով եօթն
մահուչափ մեղօք մոլորեալ եմ։

Հպարտութեամբ, ամբարտաւանութ՟, անբարհաւաճութեամբ, գոռոզութեամբ, սնափառութեամբ, փառասիրութեամբ, պատուասիրութեամբ, զգեստասիրութեամբ, պճնելով, անձնահաճելով, կեղծաւորելով, սուտ առաքինի ձեւանալով, զաղօթս 'ի ցոյցս մարդկան առնելով. անարժանութեամբ յեկեղեցի մտանելով. 'ի խաչ եւ 'ի բուրվառ եւ յաւետարան մերձենալով, եւ կարդալով։

Անեղին Աստուծոյ եւ թիւր խոստովանելով, եւ զմեղս պատճառելով, խեթիւ եւ ատելութեամբ եւ անմաքուր վարուք եւ անսուրբ հոգւով զՔրիստոս պատարագելով. զԱստուած Հայր հայհոյելով, զՈրդին աստուծոյ արհամարհելով, եւ զս՟բ Հոգին թշնամանելով, եւ զանբաւականալին Աստուած 'ի բարկութիւն շարժելով 'ի մե՟ծի եւ մարդկան։ Ո՛չ որ յերեւելիս ա՟ծապաշտ եւ աղօթօղ եւ պահեցօղ, եւ 'ի ծածուկ

Թերահաւատ եւ ծոյլ, եւ յամենայն բարեաց ունայն: Ցերեւելին կուսան, եւ 'ի ծածուկ վաւաշոտ: Ցերեւելին ժիր, եւ 'ի ծածուկ թոյլ: Ցերեւելին սուրբ, եւ 'ի ծածուկ պիղծ: Ցերեւելին պարկեշտ՝ եւ 'ի ծածուկ աղահ: Ցերեւելին ողորմած, եւ 'ի ծածուկ անողորմ:

Ցերեւելի աղքատասէր՝ եւ 'ի ծածուկ աղքատատեաց:

Ցերեւելին տաքինի, եւ 'ի ծածուկ պղերգ: Ցերեւելին գովելի, եւ 'ի ծածուկ պարսաւելի:

Ա՛րդ զորս ասացից եւ կամ զո՛րս թուեցից. երբ ոչ եզր կայ եւ ոչ թիւ:

Անզուգեալ եմ կարգելս զանձնս ը՟ արդարս համարելով. եւ զայլս քամահելով:

Զոմնս սրբոց ոչ մեծարելով: եւ հայհոյութեամբ մեղուցեալ եմ Աստուծոյ: զանուն միայն ունիմ քահանայի եւ ոչ զգործն, զօրինակն ունիմ եւ ոչ զճշմարտութիւն. քանզի ամենայն անպատրաստութեամբ եւ անկարգութեամբ կալով զմահուն օրն եւ զանա-

չար դատաստանն Աստուծոյ և ղդժոխոց ահն և զարքայութեան սիրն մոռացող · կամապաշտելով, հակառակելով, անհնազանդ լինելով ։ 'ի հեզութենէ և 'ի խոնարհութենէ փախչելով · զծերսն չպատուելով · զծնօղսն չխրելով · պատհակութեամբ շրջելով, մեղուցեալ եմ։

Ընդդէմ Աստուծոյ և բարկացողութեամբ, ցասմամբ , սրտմտութեամբ , գազանաբար յարձակելով, և զեղբարս խածանելով · կագ և կռիւ առնելով, և յեշոցք տալով, 'ի չար կարծիս դատելով · խռովկալով, սուտ հաշտութիւն առնելով · և զհոգիս իմ կորուսանելով, և բարս գազանի ունելով, և զանբան անասունս անխնայ հարկանելով · 'ի մարդկան սիրոյն որոշելով, պառակտումն առնելով, բանսարկելով, խարդախելով, խորամանկելով, երկմտելով, թերահաւատելով · բազումտրտունջ և նզովք հանելով · զուր և անիրաւ զրպարտելով · քրթմնջելով · շողմողելով ·

Մեղայ մեղայ մեղայ, և նախանձ ունե-լով, մախալով, դիմադարձելով, ոխա-կալութեամբ, ատելութեամբ, քինահա-ճութեամբ, չարութեամբ, նենգելով, քամահելով, դշարելով, սուտ վկայելով, բամբասելով, արհամարհելով, և զառաջ-նորդս եկեղեցւոյ և զվարդապետս, ըզ-ծերս՝ և զաղքատս; և զայլոց իրաւն սուտ առ-նելով, և զիմ սուտն իրաւ. զայլոց փոքր մեղքն մեծ համարելով, և զիմ բազումն ծածկելով, զայլոց շիւղն գերան կարծե-լով, և զիմ գերանն շիւղ. զայլոց բարին չար տեսելով, և զիմ չարն բարի. զայլոց լոյսն խաւար տեսանելով, և զիմ խաւարն լոյս. զայլոց առաքինութիւնն մոլորդահա-ճութիւն դատելով, և զիմ մոլորդահաճու-թիւնս առաքինութի, և յանդուգն լինելով ՚ի մէջ բանից անկանելով, լրբելով, ՚ի խը-րատուց երես դարձուցանելով՝ և ա-ռաջի ծերոց լռութեամբ ոչ կալով. և հրամանաց և բանից նոցա՝ ոչ լսելով.



Ուխտ

Ուխտ դնելով և ոչ կատարելով. և ան-
յուսութեամբ ՚ի խորս տրտմութեան ան-
կանելով. զպատուիրանս Աստուծոյ արհա-
մարհելով. սուրբ գրոց ունկն չդնելով.
՚ի սուրբ հրեշտակէն խմէջ չակնածելով.
և ՚ի բարեաց թափուր լինելով. ընդ չարին
խնդալով. զբարեկամին ատելով. զթշնա-
մին չսիրելով. զպատկերն Աստուծոյ չա-
տելով:

Ո՜ թէ զորքանութիւնն որպէս կարացից
յայտ բերել՝ որ բազում են քան զաւազ
ծովու. քանզի մեղուցեալ եմ Աստուծոյ
և ագահութեամբ. արծաթսիրութեամբ.
խաբելով. աւելի առնլով և պակաս տա-
լով. փախճառաւորելով. կծծելով. դատ գո-
ղանալով. յայտնի յափշտակելով, և զըր-
կելով:

Աւելի ստանալով, աղքատին չողորմելով,
յառ օտարին չգթալով. զեղբարս չսիրե-
լով, զկարօտեալսն չդարմանելով, զհի-
ւանդն

ւանդն չտեսանելով, տկարին չապաստաւո-
րելով, զաղքատս արհամարհելով, զհա-
րուստն գովելով, յաջողելոյն ծառայելով,
ունեւորացն սուտ հաճութիւն առնելով,
աչառելով, և մարդահաճոյ լինելով:
Սուտ երդուելով, և զԱստուած ՚ի բար-
կութիւն շարժելով:

Մեղայ մեղայ և քան զհող երկրի ծան-
րագոյն մեղայ, քանզի մեղայ Աստուծոյ,
և Որկրամոլութեամբ. ՚ի կերակուրս և
ըմպելիս՝ ցանկանալով. աւելի առնելով՝
և անյագ ուտելով, զորովայնս խճողելով.
առանց ժամու և ժամ արձակի ճաշակելով.
զպահսն արհամարհելով, առանց մեծի
հիւանդութեան զլինելն ուրելով. զմարմ-
նոյս զարմանն հոգալով. զորովայնս պաշ-
տելով, և խաչին Քրիստոսի թշնամի
անուանելով, և Լուսաւորչին կանոնաց
սներկս լինելով:

Մեղուցեալ եմ իմ սուրբ կարգիս, ծու-
լութեամբ, և հեղգութեամբ, անժուժ-
կալ լինելով. ագահանալով. զուսումն ատե-



լով

դատարկ կենալով. զուրբ գիրս ոչ կար-
դալով. քնով դանդաղելով, և 'ի ժամանակին ծանրանալով, արթուն ոչ կալով, և պատմութեան որոց միտ ոչ դնելով. բազմախօսութիւն առնելով. սաղմոսի ականջ ոչ դնելով և կամ ձեռագործով յապաղելով. յօրանջելով. ձգտելով. ձանձրանալով. և Յաստուծոյ ոչ երկնչելով. 'ի հրապարակ նստելով՝ շատախօս լինելով, թատերս և 'ի ծաղրս լկտեաց հեշտանալով և ծաղր առնելով:

Ընդդէմ Աստուծոյ մեղայ և պոռնկական խորհրդով. գիճութեամբ, աղտեղութեամբ, ըղձախոհութեամբ, վավաշոտ ցանկութեամբ. զանազան և զազիր խորհրդով 'ի գիշերի և 'ի տունջեան պէս պէս կերպարանօք քնով և արթնութեամբ. և արատ հայելով. կատակերգելով, անամօթ լինելով. լրբելով, ցոփ խօսելով, և որկրական մարմնաշարժութբ զմիտս աղտեղելով, առ իգականս և առ արուականս. առ անասնականս ապականեալ խորհրդով



մե

մեղանչելով, և առ ամենայն մոլորական դատարանս և երազական փորձութեանց. քնոյ և արթնութեան, որ 'ի ժամու և տարաժամու անկեալ է 'ի վերայ տառա֊պեալ հոգւոյս, զոր չարին յօժարութեամբ մեղուցեալ եմ Աստուծոյ։

Եւ արդ՝ ահա յայտնեալ հրապարակե֊ցի զորպիսութիւն մեղաց իմոց առաջի Տն և ապաշաւեալ զղջացեալ յամենայնէ, և եկեալ 'ի խնդիր Թողութե ախտականաց իմոց։ Եւ դու հայր մեր և սուրբ տէր հայցեա՛ զթողութիւնն Աստուծոյ. և շնորհեա՛ քա֊ւութիւն ինձ յԱստուծոյ, հրամանաւն՝ զոր ունիս 'ի Քրիստոսէ Աստուծոյ։ Որում փառք և գոհութիւն և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Աղօթք արձակման. Արարեալ մեծի Րաբունապետին Գրիգորի. 34

Ողորմեսցի քեզ մարդասէրն Տէ, և Թողութի շնորհեսցէ ամ յանցանաց քոց խոստովանեցելոցն և մոռացե֊



լոցն

լոցն. և ես կարգաւ քահանայական իշխա-
նութեան և հրամանաւն Աստուածային, թէ
զոր արձակեցէք յերկրի՝ լիցի արձա-
կեալ յերկինս. նովին բանիւն արձակեմ
զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց
քոց 'ի խորհրդոց 'ի բանից և 'ի գործոց՝
յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։
Եւ դարձեալ տամ զքեզ 'ի խորհուրդս
սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ գործեսցես
բարիս՝ եղիցի քեզ 'ի բարեգործութիւն և
'ի փառս հանդերձեալ կենացն. Ամէն։

Աղօթք դարձելոցն 'ի զղջումն ապաշխարութեան։

## Զ.

Անսկիզբն Աստուած և անհասանելի՝
բա՛ց զաչս սրտի իմոյ բանիւ դի-
տութեան քո՝ բաւական լինել
գոհանալ զանուանէ քումմէ. գովել և փա-
ռաւորել զքեզ և արժանապէս գնալ 'ի ճա-
նապարհս քո։

Պատուար արդար՝ երկայնամտեան առիս
բազմամեղս քոյով մարդասիրութեամբդ .
զի եղիցի իմ մեղօք՝ զեղխեալ անօրէնու-
թեամբ . և ղաղէր գխնութեամբ զմարմինս
իմ ապականեցի ։

Որ էիր յառաջ էականութեամբ Աստ-
ուած ընդ Հօր՝ ի մեզ հաճեցար բնակիլ
ընդ հողեղինացս . և ընդ մարդկան շրջե-
ցար ընդ մեղաւորացս . թող ասէր զմեղս իմ
և թեթևացո զծանրաբեռնեալս . ժտելով
հայցեմ ՚ի քէն , զի ժամանակ է ապաշխա-
րութեան ։

Ի քէն հայցեմ բազումողորմ տէր աղ-
բիւր կենաց՝ լուսաւորեա զաչս սրտի իմոյ
լուսով գիտութեան քո ։

Յոյս աշխարհի . Քրիստոս . ծագումն ան-
ճառելի լուսոյ . կեանք՝ որոց սիրեն ըզ-
քեզ . կերակուր անսպառելի . կենդանու-
թիւն յաւիտենից ։

Հուր հոգւոյդ սրբոյ՝ հալեա զպաղումն
ձմեռնացեալ սրտի իմոյ . որ ծուլեալ է ըզ-
կենլ գործովք անօրէնութեան ։



Ու

Ուղղեա՛ քո Աստուածային զօրութեամբդ
զանուղղայ խորհուրդս իմ չար ուղեկանին
աստի կենացս ։ Ճ՛րագ ճշմարտութեան
և ճառագայթատու՝ մերկեա՛ յինէն զխա-
ւար մթացեալ մեղացս։

Զեղկելիս մեղօք յիշեա՛ քո Աստուա-
ծութեամբդ յահագին աւուրն յայնմիկ
ահեղ մեծի դատաստանին ։

Ալէկոծելոց նաւահանգիստ՝ և լռութիւն
ունայնացելոցս յարդարութենէ և ունողիս
զանօրէնութիւն չար գործովք։

'Ի չարիս չարչարեալ է անձն իմ․ զի՛նչ ա-
բարից մերկացեալ անձամբս․ այնս այնս
ախտիւք պղծեցայ յանառակութե․ զրկե-
ցայ 'ի հայրենական լուսոյն․ ընկեցի զձե-
ռագիր որդեգրութեան կենաց․ ըներուցի
զհուր յաւիտենական։

Սուրբ սրտի՛ կարդամ առ քեզ՝ ամենա-
սուրբդ Աստուած․ վտանգելոյս օգնական․
վիրաւորելոյս բժիշկ․ անդի տառապելե-
լոյս․ կորուսելոյս խնդրօղ․ մեռելոյս և
գերելոյս դարձուցիչ․ ապաւէն ամենեցուն

 որք

որք կարդան առ քեզ։ Տո՛ւր առատալե-
լոյս և առաքինութեալոյս գեղեցկոյս 'ի սատա-
նայէ զմեծ քո զողորմութիւն։

Ահա հասեալ եմ 'ի դուռն մահու չարա-
չար գործովք իմովք. դարձ իմ 'ի վեր համ-
բառնամ առ բարձրեալ Տէրդ և բարերար.
հայցեմ 'ի քէն բա՛ց զդուռն ողորմութեան
մեղուցեալ հոգւոյ իմոյ. որպէս բացեր ա-
ւազակին զդուռն դրախտին քո. և մի՛ անօ-
թայից դարձուցաներ զիս 'ի քո առատ
ողորմութենէ. զի գին եմ սուրբ արեան
քո. յիշեա՛ զիս և ողորմեա՛ ինձ։

Աստուած։

Որ անեղ և անսկիզբն ես՝ անստեղծ և ա-
րարիչ ամենայն արարածոց. որ ո՛չ աշխարհս
տանել զքեզ կարէ, և ո՛չ երկինք բովան-
դակել կարեն. 'ի վեր ես քան զերկինս և
անբաւ քան զծագս. երևելիք և աներևո-
ւյթք բովանդակեալ են առաջի քո։
Դու տիրես ամենեցուն և հրամանաւ
քո կառավարին ամենայն արարածք։

 Դու

Դու աղքատացուցանես և դու մեծացու-
ցանես ․ դու սպանանես, հարկանես և բ-
ժշկես ։ Դու ես Աստուած իմ և փրկիչ
վտանգելոյս 'ի սատանայէ ․ առողջացու-
ցիչ հիւանդիս մեղօք ․ ընդունող աղօթից
և կատարիչ խնդրուածաց ։ Նայեա՛ Տէր 'ի
պաղատանս իմ և ընկա՛լ զիս մարդասի-
րութեամբ քո ։

Մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս ․ և
մի՛ սրտմտութեամբ քո յանդիմաներ զիս․
զի դու ես Տէր և Արարիչ ․ Հայր և
Ստեղծիչ ․ և ես առ ո՞վ երթիցեմ զի օգ-
նութիւն իմ 'ի քէն է ։

Հայեաց 'ի պաղատանս իմ․ և ընկա՛լ զիս
մարդասիրութեամբ քո ․ զի քեզ մեղայ
և զքեզ աղաչեմ և զքեզ խոստո-
վանիմ ։

Մեղայ յերկինս և առաջի քո ․ մի՛ ընդ
դատաեալսն տանջեր զիս ․ և մի՛ ընդ դա-
տապարտեալսն պատուհասեր ։

Այլ ընդ կամարարս կամաց քոց ընկալ-
ցիս ․ և ընդ պահօղս պատուիրանաց քոց

 պա

պահեա՛ զիս. զի թէ առանց ներելոյ զբա-
զում յանցանս իմ քննես՝ ապա ընդունայն
է ինձ խոստումն յարութեանն. և հուր գե-
հեննին է ինձ ժառանգութիւն. և թէ զ-
դատարկաբանութիւնս իմ և զանդէպ զայլ
անօրէնութիւնս իմ խնդրեսցես յինէն,
ապա երանեմ չեղելոյն յորովայնէ:

Լուեա՛ Տէր 'ի պաղատանս իմ և ընկալ
զիս մարդասիրութեամբդ քո:

Ողորմեա՛ ինձ որպէս քանանացւոյն, պո-
ռնկին, որպէս մաքսաւորին. և գթա՛ յիս
որպէս յանառակ որդին. և որպէս աւա-
զակին շնորհեա՛ բազում յանցանաց իմոց
զթողութիւն:

Ընկա՛լ զիս որպէս զհայհոյիչն և զհալա-
ծիչն. փարատեա՛ զխաւար մեղաց յաչաց
իմոց:

Բա՛ց զաչս իմ զլցեալս երկրային ցան-
կութեամբ երկնային լուսովդ. և բժշկեա՛
զվիրաւորեալ լեզուս իմ 'ի բամբասանաց:
Սրբեա՛ զսիրտ իմ 'ի չար և 'ի պիղծ խոր-
հրդոց. [illegible] զի քեզ ցանկամ տեառնդ իմոյ

 բա

բարերարի և բաղձալութի իմոյ Վարդէիդ ․

Մի յաւիտենական ամօթոյն ամաչեցու-ցաներ զիս ․ և մի ահեղ դատաստանաւն դողացուցաներ ։

Մի տիեզերական հրապարակաւն զիս յան-դիմաներ ․ և մի անմեռելի տանջանացն մատներ ։

Մի տակալի հրոյն պատուհասեր ․ այլ փրկեա զիս ՚ի հրացեալ հնոցէն, ՚ի հրա-հասեալ գետոյն և յորդանցն չարա-թունից, ՚ի հանապազորդ նեղութենէն և ՚ի կրճտել ատամանցն ։

Եւ բնակեցո զիս ընդ կամարարս կամաց քոց՝ յանանցական կեանսն ։

Զի ընդ նոսին արժանի եղէց գոհանա-լով փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին ․

Ամէն ։

Օրաւուր Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Հրեշտակական Վարդապետի։ Ասն Արեանն Տեառն վերասցին ամենայն հեծութիւնք. և հասցեն ողոր-մութիւնքն։ Գլուխ. ԳԼ.

Արեգակն արդար Ճառագայթ օրհ-նեալ։ Լուսոյ կերպարան։ Փա-ռաց անճառութեան։ Բարձրեալ անքննին։ Զօրեղ անպարտ։ Բարոյ բերկրութիւն։ Յուսոյ տեսութիւն։ Գովեալ երկնաւոր։ Թագաւոր փառաց։ Քրիստոս արարիչ։
Խոստովանեալ կեանք։

Եւ արդ զԹերութիւն մխիթարանաց բազ-մախառն ձայնի երգելոյս՝ ամենազօրդ բա-նիւ լցեալ՝ մատուսցես յաղերս հաճութե-նոր քում բարձրելոյ։ Որ վասն իմ ՚ի փորձ եկեր անխծից, կերպարանեալ զիմ նմա-նութիւն, կենաց օրհնութիւն։ Վերնոց և ներքնոց բարեխնամօղ տեսուչ համայ-նից։ Զի թէ յանձն առեր մեռանել վասն իմ Աստուած և տէր բոլորեցուն, ո՞րչափ

Հաճեսցիս առաւել և այժմ վասն զի ուր կենաց կարեկցել • ընդ իմ պարտաւորին միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ՝ առելոյ ՚ի մէնջ՝ առ հանապազօրդ. քո Տէր: Եւ վասն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ ՚ի հաճութիւն կամաց առաքելոյդ, բարձցին վասնզի մեղուցեալ դատապարտելոյս: Թողցին պարտիքն:
Ապաքինեսցի ամօթն: Նուազցին պատկառանքն: Բարեգործեսցին դատակնիքն: Սատակեսցին որդունքն:
Վերասցի լուծն: Հանդարտեսցի կրճտումն ատամանցն: Սպառեսցին որդքն:
Հատցին արտասուքն: Մերժեսցի սուգն: Հալածեսցի խաւարն: Վանեսցի հուրն: սաստկութեան: Հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք:
Եկեսցեն գթութիւնք կամաւոր կենաց ամենից: Ծագեսցէ լոյս: Արագեսցէ փրկութիւնդ: Հասցէ օգնութիւնդ: Ժամանեսցէ այցելութիւնդ: Կանխեսցէ ցօղդ ողորմութեան: Յառաջեսցէ

 առ

արբուցէ զանդաստանս պարարեալ անկեալ ոսկերաց՝ թշուառութք ՚ի վիշտն մահու ։

Ծաղկեսցէ պտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ՝ զերկիրս խնամեալ յաւուրն լուսոյ։

Որ անձախապէս միշտ պատարագիր՝ յիշատակ կենաց փրկութե հոգւոց ննջեցելոց։

Զի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո գթած ՚ի քեզ զօրացեալ՝ քեւ նորոգեցայց՝ զատեալ ՚ի մեղաց անմահ կենդանութեամբ ՚ի յարութեանն արդարոց՝ Հօր քում օրհնեցեալ ։

Ընդ որում քեզ փառք՝ և Հոգւոյդ սրբոյ բարերարութիւն վայելչական գոհութք՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից՝ Ամէն։



Գլուխ. Գ Գ.

Յաւիտենական, բարերար և ամենակալ. Ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ. Կեանք 'ի մահու և լոյս 'ի խաւարի. Յոյս ակնունողաց, և երկայնմտութիւն տարակուսելոց. Որ ամենարուեստ իմաստութեամբ քով դարձուցանես յայգ զստուերս մահու. Աննուազ ծագումն և անմուտ արեգակն. Քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ. Որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց. երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. Որ լսես զհեծութիւն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նոցա. Աստուած իմ և Թագաւոր իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ Յս̃ Քրիստոս Աստուած մեր. Սուրբդ՝ հանգուցեալ 'ի հոգիս սրբոց. Մխիթարութի̃ վշտաց, և քաւարան մեղուցելոց. Որ գի-

տես զմի՛ յաւուրց քան զլինիլ նոցա ։ Ա-
ռաքեա՛ զպահպանողական զօրութի՛ աջոյ քոյ ։
և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ
չարէ ։ Որպէս զի զյիշատակ սոսկալի և սր-
բոյ անուանդ՝ միշտ համբուրեալ շրթամբք
հոգւոյ ընդ ձայնի՛ շնչոյ , կեցից պահպանեալ
ընդ այնոսիկ որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ ։
Եւ 'ի գլորշմէ խաչի քոյ նշանիդ՝ զոր
աստուածային արեամբդ քո ներկեալ նո-
րոգեցեր և 'ի նոյն շնորհ որդեգրութե՛ զմեզ
մկրտեցեր , և 'ի փառս պատկերի քո նկա-
րեալ յօրինեցեր ։ Յայս պարգևօք Աստ-
ուածականօք , ամաչեսցէ սատանայ ։ քակ-
տեսցին մեքենայքն ։ բարձցին որոգայթքն ։
պարտեսցին մարտուցեալքն ։ պակասես-
ցին զէնքն այրատուքը ։ մերժեսցին մէգն ։
փարատեսցի խաւարն ։ մեկնեսցի մառա-
խուղն ։ Բազուկ քո հովանասցէ , և աջ քո
կնքեսցէ ։ Վասն զի գթած ես և ողորմած ։
և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառա-
յից քոց ։ Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւոյդ սր-
բոյ փառք և իշխանութի՛ յաւիտեանս յա-
ւիտենից ։ Ամէն ։

Ողջոյն առ Սուրբ Ընծայեալն ի տաճարն Սուրբն Աննայ.

# Ա.

Սածլեն ամենօրհ նեալ.
ըզ պաղատանս մեր ըն կալ.
'ի հանգստեան ժամուս հա սեալ.
առ քեզ գոչեմք անձամբ թախ ծեալ:
Բանին կենաց բարձօղ ե ղեր.
Աստուած մարմնով պարագրե ցեր.
առ բանն Աստուած բարեխօս լեր.
'ի փորձանաց ըզ մեզ փըր կեա:
Գովեմք եւ զու փայտ փըրկու թեան.
ամենօրհնեալ յաղթօղ նը շան.
'ի գլխերիս բատուերա կան.
ծագեա մեզ զլոյս արփիա կան:
Դողան 'ի քէն գունդք խաւա րին.
ամենահզօրաշ զէն Տրար չին.



Բզ

ընդ մեզ ողահեամ շնորհիւ քո   յին ․
՚ի գիշերիս աղջամըղ   ջին ․
Երկոտասան սուրբ առա   քելաւք ․
եօթանասուն աշակեր   տելաւք ․
յանձառ լուսոյն լոյս անուա   նելաւք ․
որթոյն կենաց պտղաբե   րեալք ․
Ձեզ աղաչեմք արտասուա   գին ․
և պաղատիմք կողկողա   գին ․
վասնզի լերուք գիւաց գըն   գին ․
ոչ մերձենալ առ մեզ չա   րին ․
Եւին ընտրեալք բանին կե   նաց ․
գումարք դասուց տեսանո   ղաց ․
որք զապագայն ժամանա   կաց ․
գուշակեցիք հոգւովն շնոր   հաց ։
Ընդ մեզ լերուք աղօթա   կից ․
որք Աստուծոյ էք խօսա   կից ․
փրկել ըզ մեզ ՚ի վըտան   գից ․
՚ի յարթնութեան և յերա   զից ։
Թագաւորին երկնաւո   րի ․
երկրպագող ՚ի յարգան   դի ․
մեծ Կարապետ սուրբ ամլոր   դի ․
միջնորդ կենաց և օրէ   նի ։



Ճա

| | |
|---|---|
| Ժամանեա՛ մեզ 'ի յօգնու | թիւն . |
| զի մի՛ մնասցուք 'ի փորձու | թիւն . |
| մաքուր մարմնով լինել 'ի | քուն . |
| արդար հոգւով մնալ ար | թուն : |
| 'Ի քէն հայցեմք արտասուա | գին . |
| Նախավկայ Տեառն արար | չին . |
| սուրբ Ստեփաննոս բացօղ զեր | կին . |
| տեսօղ զՅիսուս յաջմէ ծնո | ղին : |
| Մեր բարեխօս արեամբ քո | յին . |
| տալ մեզ հանգիստ 'ի յանկե | ղին . |
| արթուն լինել յառաւօ | տին . |
| բարեբանել զլոյսն անքը | նին : |
| Խնդրեմք 'ի քէն Հայր պատուա | կան . |
| լուսաւորիչ ազգի մարդ | կան . |
| տէր սուրբ Գրիգոր պետ պարթե | ւան . |
| լեր մեզ պարիսպ և պահա | պան : |
| Ողորմաբար 'ի մեզ գը | թա՛ . |
| զցրուեալ ոչխարս քո ժողո | վեա՛ . |
| յուրախութիւն ընդ մեզ կո | չեա՛ . |
| և 'ի բարին առաջնոր | դեա՛ : |
| Կենդանարար Թագաւո | րին . |
| Դուք ճշմարիտ զինուորք նո | րին . |



սուրբ

սուրբ մարտիրոսք վկայք Փրկ չին .
որք յաղթեցիք ըզթշնա մին .
Հօրն լուսոյ միշտ մաղթե ցէք .
և Որդին ընդ Հօր աղաչե ցէք .
Հոգւոյն շնորհօք մեզ օգնե ցէք .
'ի բանսարկուէն զմեզ թափե ցէք :
Զինուորեալ երամք ընտ րեալ .
Ծ՛նաւորաց դասք երա նեալ .
Թռչնոց երկնից էք նըմա նեալ .
յայրս և 'ի ծերպս բնա կեալ .
Պօղեալ Հոգւոց մեր 'ի մար մին .
լերանք պարիսպք ընդ դէմ չա րին .
զի յաղթեցուք Հակառա կին .
խորտակելով ըզ գլխս նո րին :
Երագունք վառեալ լուսովն՝ ի լի .
սուրբ կուսանաց դասք երա մի .
արժան եղեալք առագա ստին .
և անթառամ սուրբ պսա կին :
Ամենաբարեխօս լերուք սի րով .
առ տէր Յիսուս աղերսե լով .
'ի փորձանաց զմեզ փրկե լով .
յանշէջ Հրոյն ազատե լով .

 Յա

Յանեղ լուսոյ Աստուածա յին ·
լուսոյ ստեղծեալք բանիւ նո րին ·
զարդարեցայք հոգւով նոր հին ·
դասք իննեկի զօրք երկնա յին ·
Նախախնամեալ զմեզ փութա ջիք ·
և յօգնութիւն առ մեզ հա սիք ·
որ յԱստուծոյ հրաման ա ռիք ·
ով ճշմարիտ մեր սիրե լիք :
Շնորհատու այգի մարդ կան ·
ուր մեր Յիսուս անքննա կան ·
ըդ մեզ պահեա միշտ անսա սան ·
աստի մինչ յօր քո գալս տեան :
Ողորմութիւն մեզ պարգե ւեա ·
զհիւանդ հոգիս մեր բժըշ կեա ·
'ի բանսարկուէն ըզմեզ փր կեա ·
և 'ի չարեաց անփորձ պա հեա :
Զոր իշխանքըն խուսա րին ·
որք ընդ ծառայս քո մարտըն չին ·
քո նըշանաւ սրբոյ խա չին ·
աներևոյթ կործանես ցին :
Պարգևեից բարեաց մարդ կան ·
ամենատուաս յամենե սեան ·



պատ

պատրաստեսցէ մեզ անխա փան .
զդէտըս հոգւոյ և մարմնա կան :
Ջուր շնորհեա ինձ արտաս ուաց .
զի լուացից զգործըս չա րեաց .
արժանի եղէց քոյ հայրա նեաց .
ընդ իմաստուն սուրբ կուսա նայց :
Ով բարի իմ Տէր Յէ սուս .
և հաց կենաց սովեալ հոգ ւոյս .
առաջնորդեամ մըլրե լոյս .
և կերակրեամ զկեանս ընդ մարմ նոյս .
Արբեամ զհոգիս յաղտոյ մե ղաց .
Ի զանազան չար փորձա նաց .
Տուր ինձ գնալ ըստ քո կա մաց .
զի արժանի եղէց փա ռաց :
Ախտորեաց զիս թշնա մին .
այն որ չկամի զկեանս մարդկա յին .
զոր բժշկեամ տէր երկնա յին .
լուսաւորեամ լուսով քո յին .
Բաժեալ հոգւոյս լեր բալխ փիչ .
ցաւած մարմնոյս լեր դարմա նիչ .
մեղաց մնացըս լեր ող ղիչ .
ամենասաստ բարեաց տը ւիչ :

Րամից սրբոց աղաչա նաց .
լիննեակ դասուց հրեղէն զօ րաց .
առաքելոց .քոց սիրո ղաց .
մարգարէից տեսանո ղաց ։
Յանկալի հայրապե տաց .
և երջանիկ վարդապե տաց .
արիւնահեղ մարտիրո սաց .
և գերադոյն ճգնաւո րաց ։
Ինւսապրանկ սուրբ կուսա նաց .
որք փեսայիւ ազատեն փա ռաց .
և ամենայն մաքուր ան ձանց .
հետևողաց .քոյին կա մաց ։
Փրկեա զհոգիս 'ի տանջա նաց .
զաղբատեսիլ յանքուն որ դանց .
լսել տուր զձայն .քո աւե տեաց .
զոր խոստացար .քոց սիրո ղաց ։
Քեզ Տէրդ փառք միշտ առա .քեմք .
զՈրդիդ ընդ Հօրդ դաւա նեմք .
ընդ Հոգիդ սուրբ բարեբա նեմք .
Երրորդութեանդ երկրպա գեմք ։

Ամէն ։



Յիշա

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ԳՈՐԾԱԴՐԻ ԳՐՈՑՍ ԱՂՕԹԻՑ·

Փառաբանութիւն [illegible] [illegible] Համագոյ Սրբերրորդութեան Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն՝ Որոյ ամենահնար [illegible] օգնութեամբ յանգ [illegible] Հոգեւորոյս Աղօթից՝ [illegible] [illegible] որպէս Սքանչելի Հօր մերոյ սրբոյն [illegible] [illegible] [illegible] ՚ի հոգևոր զուարճութիւն [illegible] աղօթաւորաց:

Աղաչեմ [illegible] հոգեպարար [illegible] աղօթից [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] իմ, [illegible] [illegible] [illegible] [illegible] իմ · [illegible] Մայրն իմ · [illegible] եղբարս իմ [illegible], [illegible] և [illegible] · [illegible] իմ [illegible] · [illegible] իմ [illegible], [illegible] և [illegible] · և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] · [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ·

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
343